

ԳՈՐԾԻՔ № 122

Ի Բ Ա Վ Ա Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ա Կ Ա Ն Ա Մ Ս Ա Գ Ի Ի (Հ Ա Ն Գ Ե Ս) 2020Թ. (02)

**ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԴԱՐՁԱԲԱՆՈՒՄԸ՝
ՍԿՁԲԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՁ**

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ (ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՂԵՐԻ ԴԵԿԱՎԱՐ)**

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՅԹՆԵՐ. 2019Թ.-Ի ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԸ
ԵՎ 2020Թ.-Ի ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ**

ՀԱՐՑ ՈՒ ԴԱՏԱՍԽԱՆ





ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ «ԳՈՐԾՔ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ



**ԱՐԹՈՒՐ
ՍԱՐԳՍՅԱՆ**

Աշխատանքի իրավունքի պաշտպանի (հաշտարարի) գրասենյակի ղեկավար գլխավոր խմբագիր



**ՐԱՅԿ
ՍԱՐԳՍՅԱՆ**

ԵՊՀ տնտ. ֆակ. ղեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



**ԱՇՈՏ
ՍԱՐԿՈՅԱՆ**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



**ՎՍՐՂԱՆ
ԲՈՍԱՆՁՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



**ԷԴՈՒԱՐԴ
ԹՈՒՄԱՅԱՆ**

ՀԱՄԿ-ի նախագահ



**ՍՈՒՇԵՂ
ՍԱՆՈՒԿՅԱՆ**

Հայաստանի Ամերիկյան համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

«ԳՈՐԾՔ»-Ի ՊԱՏՎԱԿՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ



ԱՐՏԵՄ ԱՍՏԱՐՅԱՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախկին նախարար (2012-2018թթ.)



ՄԻԻԹԱՐ ՄԱՅՐԱԿԱՆՅԱՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախկին նախարար (2009-2010թթ.)



ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախկին նախարար (2008-2009թթ.)



ՈԱԶՄԻԿ ԱՎԵՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ սոցիալական ապահովության նախկին նախարար (1999-2003թթ. ընդմիջումներով)




ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՅԱՆ

Առողջապահության և սոցիալական ապահովության նախկին նախարար (2000թ.)



ԳԱԳԻԿ ԵԳԱՆՅԱՆ

ՀՀ սոցիալական ապահովության նախկին նախարար (1998-1999թթ.)



ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀՀ սոցիալական ապահովության նախկին նախարար (1996-1998թթ.)



ԱՇՈՏ ԵՍԱՅԱՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախկին նախարար (1990-1995թթ.)



ՆԱՐԻՆԵ ԲԱԼԱՅԱՆ

Հայաստանի սոցիալական ապահովության նախկին նախարար (1985-1990թթ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1.1. ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐ

- Փոփոխություններ ՀՀ աշխատանքային օրենսգրքում (պարզաբանումով) ----- 4
- Փոփոխություն ՀՀ աշխատանքային օրենսգրքում (պարզաբանումով) ----- 10
- Լրացումներ և փոփոխություն ՀՀ հարկային օրենսգրքում (պարզաբանումով) ----- 12

II. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2.1. ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԷԶ ----- 25

2.2. ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀՂՈՒՄՆԵՐՈՎ՝ ՍԿՉԲԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ ----- 26

2.3. Նորություններ ՖՀՄՍ-ներում

- ՖՀՄՍ-16 Վարձակալություն ----- 34

2.4. Փոփոխություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017թ. փետրվարի 24-ի թիվ 58-Ն հրամանում ----- 41

2.5. «2019թ. լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի բոլոր վեց փուլերի արդյունքները և «2020թ. լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի առաջին փուլը ----- 44

III. ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

3.1. Պաշտոններն ըստ աշխատանքի նկարագրության և աշխատանքի անվտանգության (հասարակայնության հետ կապերի ղեկավարի աշխատանքի նկարագրությունը և անվտանգության հրահանգը) ----- 50

3.2. «2019թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի բոլոր վեց փուլերի արդյունքները և «2020թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի առաջին փուլը ----- 58

IV. ՀԱՐՉ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ----- 64

Գրանցված է 11.02.2005թ.,
Պետական գրանցման
վկայական՝ N 03Ա067699,
տրված՝ 14.02.2005թ.
Տպագրվում է 2010թ.-ից
Տպաքանակը՝ 930
Գինը՝ պայմանագրային
Տպագրության է տրվել 28.02.2020թ.

Գովազդային նյութերի բովանդակության
համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

Լրատվական գործունեություն
իրականացնող՝ «Գործք» ՍՊԸ

Տպագրվել է՝ «ԱՆՏԵՆՈՐ» տպարանում
Ձևավորող՝ Լևոն Ամիրջյան, Ռուզաննա Շավարշյան

Խմբագրության հասցեն՝
ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք
հեռ.՝ (010) 56-72-93
www.gortsq.am, press@gortsq.am





ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ

Տեղեկանք

- ✓ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004թ. նոյեմբերի 9-ին ընդունված ՀՀ աշխատանքային օրենսգրքում (այսուհետ՝ ՀՕ-124-Ն օրենսգիրք) փոփոխություններ են կատարվել 2020թ. հունվարի 21-ին, որը ստորագրվել է 2020թ. փետրվարի 7-ին: Հաշվառման համարը՝ ՀՕ-49-Ն օրենք:
- ✓ ՀՕ-124-Ն օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 30 անգամ:
- ✓ 2020թ. հունվարի 21-ին ընդունված ՀՕ-49-Ն ընդունված օրենքով փոփոխություններ են կատարվել ՀՕ-124-Ն օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ, 44-րդ հոդվածի 2-րդ մասերում, 48-րդ հոդվածում, 86-րդ հոդվածի 2-րդ մասում, 116-րդ հոդվածում, 176-րդ հոդվածի 3-րդ մասում, 181-րդ հոդվածում:
- ✓ 2020թ. հունվարի 21-ին ընդունված ՀՕ-49-Ն օրենքն ուժի մեջ է մտել 2020թ. փետրվարի 22-ից:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«ՀՀ ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը պայմանավորված է հետևյալ երկու հանգամանքներով՝

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքում օգտագործված «պետական (հատուկ) ծառայություններ», «տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներ» և այլ արտահայտությունները «Քաղաքացիական ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունների արդյունքում այս գոյություն չունեն: Քանի որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով պաշտոնները դասակարգվել են քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական պաշտոնների, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ, 44-րդ, 86-րդ, 176-րդ և 181-րդ հոդվածներում:

2. Նախկին իրավակարգավորմամբ սոցիալական գործընկերության շրջանակում ճյուղային կոլեկտիվ պայմանագրի կողմեր էին հանդիսանում արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը և համապատասխան պետական կառավարման մարմինը կամ համայնքի ղեկավարը, իսկ զանգվածային ազատման դեպքում, երբ տեղի է ունենում կազմակերպության լուծարում կամ աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում, գործատուն պարտավոր է ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, մինչև աշխատանքային պայմանագրերը լուծելը, ազատվող աշխատողների թվաքանակի մասին տվյալները (ըստ մասնագիտությունների և սեռատարիքային կազմի) ներկայացնել զբաղվածության ոլորտում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին և աշխատողների ներկայացուցչին . . . :

Ինչպես հայտնի է, պետական կառավարման մարմինը մշակում է տվյալ ոլորտի ռազմավարությունը և իր առանձնացված ստորաբաժանումների միջոցով իրականացնում դրանք: Այդ համատեքստում զանգվածային ազատումների մասին տեղեկություններ ստացողը ոչ թե պետք է լինի զբաղվածության ոլորտում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը, այլ հենց պետական մարմինը: Նույնը նաև պետք է հաշվի առնել ճյուղային կոլեկտիվ պայմանագիր կնքելիս: Հետևաբար, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 48-րդ և 116-րդ հոդվածներում կատարված փոփոխությամբ կազմակերպություններում տեղի ունեցող զանգվածային ազատումների մասին տեղեկությունները պետք է ներկայացնել ոչ թե զբաղվածության ոլորտում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին, այսինքն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, այլ

նրա համակարգում գործող պետական մարմին, այսինքն՝ զբաղվածության պետական ծառայություն՝ գործակալություն, իսկ ճյուղային կոլեկտիվ պայմանագրի դեպքում՝ կողմ պետք է հանդես գա ոչ թե պետական կառավարման մարմինը, այլ պետական մարմինը:

- ✓ N 124-Ն Օրենսգրքում կատարված փոփոխությունների հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակում փոփոխությունները ներկայացվում են հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, լրացումները՝ գունավորված:

Այսպես՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Օ Ր Ե Ն Ս Պ Ի Ր Ք



Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 9-ին

**Բ Ա Ժ Ի Ն 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Գ Լ ՈՒ Խ 1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 7. Աշխատանքային օրենսդրության գործողության ոլորտը

1. Աշխատանքային օրենսդրությունը և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերը տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ծագած աշխատանքային հարաբերությունների վրա, անկախ նրանից, թե որտեղ է կատարվում աշխատանքը՝ Հայաստանի Հանրապետությունում, թե գործատուի հանձնարարությամբ՝ այլ պետությունում:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները ենթակա են պարտադիր կատարման բոլոր գործատուների (քաղաքացիներ կամ կազմակերպություններ) համար՝ անկախ նրանց կազմակերպական-իրավական և սեփականության ձևից:

3. Նավերում կամ օդանավերում (թռչող սարքերում) իրականացվող աշխատանքների ժամանակ ծագող աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, եթե այդ նավերը լողում են, կամ օդանավերը (թռչող սարքերը) թռիչք են կատարում Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո կամ նշագրված են Հայաստանի Հանրապետության զինանշանով:

Տրանսպորտային այլ միջոցներում կատարվող աշխատանքի ժամանակ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերը կիրառվում են, եթե գործատուի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցները գտնվում են Հայաստանի Հանրապետության դատազրության ներքո:

4. Եթե գործատուն օտարերկրյա պետությունն է կամ նրա դիվանագիտական ներկայացուցչությունը, օտարերկրյա կազմակերպությունը կամ օտարերկրյա անձը, ապա Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերը տարածվում են Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող աշխատողների հետ ծագած աշխատանքային հարաբերությունների վրա այնքանով, որքանով չի խախտվում դիվանագիտական անձեռնմխելիությունը:

5. ՀՀ աշխատանքային օրենսդրությունը և այլ նորմատիվ իրավական ակտերը չեն տարածվում օտարերկրյա գործատուների և Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող աշխատողների միջև ծագած աշխատանքային հարաբերությունների վրա, անկախ այն հանգամանքից, որ աշխատողները գործատուի հանձնարարությամբ աշխատանք են կատարում Հայաստանի Հանրապետությունում:

6. Եթե դատական կարգով հաստատված է, որ գործատուի և աշխատողի միջև կնքված քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրով փաստացի կարգավորվում են աշխատանքային հարաբերությունները, ապա նման հարաբերությունների նկատմամբ կիրառվում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները:

7. Քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

«7. Հանրային պաշտոններ¹ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց², ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:»:

- 1 Հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, որի 4-րդ հոդվածի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի պետական և համայնքային: Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական: Համայնքային պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական և հայեցողական: Պետական քաղաքական պաշտոններ են Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների, վարչապետի, փոխվարչապետների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի, նախարարների և նրանց տեղակալների պաշտոնները: Համայնքային քաղաքական պաշտոններ են համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները:
- ✓ Պետական վարչական պաշտոններ են Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, վարչապետի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների, Սարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի, Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, պետական պահպանության ծառայության պետի և նրա տեղակալների, վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարի, մարզպետների և նրանց տեղակալների, դատական ղեկարտամենտի ղեկավարի, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի, գլխավոր ռազմական տեսուչի և նրա տեղակալի պաշտոնները:
- ✓ Համայնքային վարչական պաշտոններ են Երևանի, Գյումրու և Վանաձորի գլխավոր ճարտարապետների, Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա տեղակալի, բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնները:
- ✓ Ինքնավար պաշտոններ են Սարդու իրավունքների պաշտպանի, Սահմանադրական դատարանի դատավորների, անկախ պետական մարմինների անդամների, ինքնավար մարմինների անդամների, Կիճակագրական պետական խորհրդի անդամների, Կճառքի, վերաբնիչ և առաջին ատյանի ատյանի դատավորների, գլխավոր դատախազի և դատախազների, քննչական մարմինների ղեկավարների և ղեկավարների տեղակալների, քննիչների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոնները:
- ✓ Պետական հայեցողական պաշտոններ են Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, փոխվարչապետների խորհրդակցանի, մամուլի քարտուղարի, օգնականի և ռեֆերենտի պաշտոնները, ՀՀ դիվանագիտական երկկայացուցիչների պաշտոնները, Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդակցանի և օգնականի պաշտոնները, Սահմանադրական դատարանի մամուլի քարտուղարի, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդակցանի, մամուլի քարտուղարի, օգնականի պաշտոնները, վարչապետի գլխավոր խորհրդակցանի պաշտոնը, հատուկ հանձնարարություններով ղեսպանի պաշտոնը, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի պաշտոնը, նախարարների, Ազգային ժողովի նախագահի տեղակալների, գլխավոր դատախազի, Կառավարությանը, վարչապետին ենթակա պետական մարմինների ղեկավարների, անկախ պետական մարմնի, ինքնավար պետական մարմնի, ինքնավար պետական մարմնի նախագահների, մարզպետի խորհրդակցանի, օգնականի պաշտոնները, գլխավոր դատախազի, նախարարի մամուլի քարտուղարի պաշտոնները, նախարարությանը ենթակա պետական մարմնի, տեսչական մարմնի ղեկավարի օգնականի պաշտոնները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի մամուլի քարտուղարի, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, վարչապետի աշխատակազմի ղեկավարի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականի, Ազգային ժողովի խմբակցության փորձագետի, Ազգային ժողովի պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնները, վարչապետի ռեֆերենտների խմբի ղեկավարի պաշտոնը, վարչապետի արարողակարգի պատասխանատուի, փոխվարչապետի արարողակարգի պատասխանատուի պաշտոնները, Սարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ղեկավարի և ղեկավարի տեղակալի պաշտոնները, Սարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ղեկավարի, օգնականի և մամուլի քարտուղարի պաշտոնները, դատավորի (այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորի), գլխավոր դատախազի տեղակալի, նախարարի տեղակալի, Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմինների ղեկավարների տեղակալների, անկախ պետական մարմնի նախագահի տեղակալի, ինքնավար մարմնի նախագահի տեղակալի, մարզպետի տեղակալի օգնականի պաշտոնները և անկախ պետական մարմնի, ինքնավար մարմնի անդամի օգնականի պաշտոնները:
- 2 Հանրային ծառայության պաշտոններ են համարվում պետական ծառայության պաշտոնները, համայնքային ծառայության պաշտոնները և հանրային պաշտոնները («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված):
- ✓ Պետական ծառայության պաշտոն է համարվում քաղաքացիական ծառայության, դիվանագիտական ծառայության, մաքսային ծառայության, հարկային ծառայության, փրկարար ծառայության, զինվորական ծառայության (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության գորակոչի միջոցով իրակա-նացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայության, ոստիկանությունում ծառայության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, դատական կարգադրիչների ծառայության պաշտոնները:
- ✓ Համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնողներ են համարվում համայնքային ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններում 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերում պաշտոն զբաղեցնող անձինք («Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք):

8. Սույն օրենսգիրքը չի կարգավորում ուղղիչ հիմնարկներում պատիժը կրող քաղաքացիների մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունները, բացառությամբ այն հարաբերությունների, որոնք վերաբերում են աշխատաժամանակի և հանգստի ռեժիմին, աշխատանքի վարձատրությանը, աշխատողների անվտանգությանը և առողջությանը:

(7-րդ հոդվածը լրաց. 24.06.10 ՅՕ-117-Ն, փոփ. 21.01.20 ՅՕ 49-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 2

ԿՈՒԵԿՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 7

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հոդված 44. Սույն օրենսգրքի 2-րդ բաժնի նորմերի կիրառման առանձնահատկությունները

1. Օրենքով սահմանված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների նկատմամբ սույն օրենսգրքի 2-րդ բաժնի նորմերը կիրառվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:

2. Հատուկ ծառայողների, քաղաքական, հայեցողական և քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների նկատմամբ չեն կիրառվում սույն օրենսգրքի 2-րդ բաժնով սահմանված նորմերը:

«2. Զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության մարմինների ծառայողների և հանրային պաշտոն (բացառությամբ հայեցողական պաշտոնների³) զբաղեցնող անձանց մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների նկատմամբ չեն կիրառվում սույն օրենսգրքի 2-րդ բաժնով սահմանված նորմերը:»:

(44-րդ հոդվածը խմբ. 24.06.10 ՅՕ-117-Ն, փոփ. 21.01.20 ՅՕ 49-Ն)

Գ Լ ՈՒ Խ 9

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ, ՃՅՈՒՂԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՒԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

Հոդված 48. Հանրապետական, ճյուղային և տարածքային կոլեկտիվ պայմանագրերի կողմերը

1. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կողմերն են արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունը, գործատուների հանրապետական միությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ճյուղային կոլեկտիվ պայմանագրի կողմերն են տնտեսության (արտադրության, ծառայության, մասնագիտության) համապատասխան ճյուղի գործատուների միությունը և արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը:

Եթե գործատուն Հայաստանի Հանրապետությունն է կամ համայնքը, ապա ճյուղային կոլեկտիվ պայմանագրի կողմերն են արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը և համապատասխան պետական կառավարման մարմինը կամ համայնքի ղեկավարը:

3. Տարածքային կոլեկտիվ պայմանագրի կողմերն են որոշակի տարածքում գործունեություն ծավալող գործատուների տարածքային միությունը և արհեստակցական կազմակերպությունների տարածքային միությունը:

(48-րդ հոդվածը փոփ. 21.01.20 ՅՕ 49-Ն)

³ Տե՛ս թիվ 1 տողատակի 4-րդ ենթակետը:

Բ Ա Ժ Ի Ն 3

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 12

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

(վերնագիրը խմբ. 24.06.10 ՅՕ-117-Ն)

Հոդված 86. Աշխատանքային պայմանագրի կնքման նախադրյալները

1. Գործատունն իրավունք ունի ինքնուրույն, ուղղակիորեն (առանց մրցութային կամ այլ ընթացակարգերի) համալրելու թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը՝ կնքելով սույն օրենսգրքով նախատեսված աշխատանքային պայմանագրեր: Աշխատող փնտրող գործատուն կարող է թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը համալրել նաև իր կազմակերպած մրցույթով կամ օգտվել համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների ծառայություններից: Թափուր աշխատատեղերի համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև մրցույթում հաղթած անձանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է գործատունը:

2. ~~Քաղաքացիական, օրենքով սահմանված պետական (հատուկ) այլ ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների թափուր պաշտոնները համալրելու կարգը և պայմանները սահմանվում են «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով:~~

«2. Հանրային ծառայության թափուր պաշտոնները համալրելու կարգը և պայմանները սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:»:

(86-րդ հոդվածը փոփ. 21.01.20 ՅՕ 49-Ն)

Գ Լ ՈՒ Խ 15

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Հոդված 116. Ձանգվածային ազատումները

1. Կազմակերպության լուծարման կամ աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում գործատուն պարտավոր է ոչ ուշ, քան երկու ամիս առաջ՝ մինչև աշխատանքային պայմանագրերը լուծելը, ազատվող աշխատողների թվաքանակի մասին տվյալները (ըստ մասնագիտությունների և սեռատարիքային կազմի) ներկայացնել զբաղվածության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական ~~կառավարման~~ մարմին և աշխատողների ներկայացուցչին, եթե նախատեսվում է երկու ամսվա ընթացքում աշխատանքից ազատել աշխատողների ընդհանուր թվի ավելի քան տասը տոկոսը, սակայն 10 աշխատողից ոչ պակաս (զանգվածային ազատումներ):

(պարբերությունն ուժը կորցրել է 22.06.15 ՅՕ-96-Ն)

2. Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով և սեզոնային աշխատանքային պայմանագրով աշխատողների ազատման դեպքերը, եթե դրանք կատարվել են առանց պայմանագրերում նշված ժամկետների խախտման, աշխատողների զանգվածային ազատումներ չեն համարվում:

(116-րդ հոդվածը լրաց. 24.06.10 ՅՕ-117-Ն, լրաց., փոփ. 22.06.15 ՅՕ-96-Ն, փոփ. 21.01.20 ՅՕ 49-Ն)

Գ Լ ՈՒ Խ 18 ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Հոդված 176. Չվճարվող արձակուրդը

1. Աշխատողի պահանջով չվճարվող արձակուրդ տրամադրվում է՝
- 1) հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն: Այդ արձակուրդի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել երկու ամիսը.
 - 2) հաշմանդամ աշխատողին կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող աշխատողին՝ բժշկական եզրակացությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ավելի, քան 30 օր տարվա ընթացքում.
 - 3) ամուսնության համար՝ երեք աշխատանքային օր.
 - 4) ընտանիքի մահացած անդամի թաղման դեպքում՝ ոչ պակաս երեք օրից:
2. Կոլեկտիվ պայմանագրով կարող են սահմանվել չվճարվող արձակուրդի այլ պատճառներ:
3. Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում աշխատողին կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 60 օր տևողությամբ: **Քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին կարող է մեկ տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ ոչ ավելի, քան երեսուե օր: «Հանրային պաշտոն զբաղեցնողներին⁴ և հանրային ծառայողներին⁵ կարող է մեկ աշխատանքային տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ ոչ ավելի, քան երեսուե օր, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:»:**
- (176-րդ հոդվածը խմբ. 24.06.10 ՀՕ-117-Ն, փոփ. 21.01.20 ՀՕ 49-Ն)*

Գ Լ ՈՒ Խ 19 ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Հոդված 181. Պաշտոնատար անձանց և ծառայողների աշխատանքի վարձատրությունը

- ~~Քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, պետական պաշտոնատար այլ անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքի վարձատրության կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:~~
- «Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքի վարձատրության կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով⁶:»:**
- (181-րդ հոդվածը փոփ. 21.01.20 ՀՕ 49-Ն)*

4 Տե՛ս թիվ 1 տողատակը:

5 Տե՛ս թիվ 2 տողատակը:

6 Հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքի վարձատրության կարգն ու պայմանները սահմանվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով:



ԾՈԾՈՒՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐԵՈՒՄ

Տեղեկանք

- ✓ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թվականի նոյեմբերի 9-ից ընդունված ՀՀ աշխատանքային օրենսգրքում (այսուհետ՝ ՀՕ-124-Ն օրենսգիրք) փոփոխություն է կատարվել 2020թ. հունվարի 23-ին, որը ստորագրվել է 2020թ. փետրվարի 10-ին: Հաշվառման համարը՝ ՀՕ-76-Ն օրենք:
- ✓ ՀՕ-124-Ն օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 31 անգամ:
- ✓ 2020 թվականի հունվարի 23-ին ընդունված ՀՕ-76-Ն ընդունված օրենքով փոփոխություն է կատարվել ՀՕ-124-Ն օրենսգրքի 226-րդ հոդվածում:
- ✓ 2020թ. հունվարի 23-ին ընդունված ՀՕ-76-Ն օրենքն ուժի մեջ է մտել 2020թ. փետրվարի 29-ից:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կարգապահական տույժ նշանակելու մասին անհատական իրավական ակտերի բողոքարկման ժամանակ աշխատողից գրավոր բացատրություն պահանջած լինելու փաստն ապացուցելու պարտականությունը կրում է գործատուն: Մինչև սույն լրացումը գործող իրավակարգավորման համաձայն՝ գործատուն բացատրություն կարող է պահանջել նաև բանավոր կերպով, հետևաբար նշված փաստն ապացուցելու համար, որպես թույլատրելի ապացույց, կարող է հանդիսանալ ոչ միայն գրավոր, այլև բանավոր ապացույցը, օրինակ՝ վկայի ցուցմունքը: Նման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ վճարելի դատարանը՝ թիվ ՍԴ/Օ111/02/13 քաղաքացիական գործով 26.12.2014թ. կայացրած որոշմամբ:

Օրենսդրական նման կարգավորումը հաճախ չարաշահումների տեղիք է տալիս և անորոշության պատճառ է հանդիսանում: Այսպես՝ դատական պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ գործատուն, պարտավոր չլինելով ունենալ աշխատողից բացատրություն պահանջած լինելու մասին գրավոր ապացույց, պնդում է, թե բացատրությունը պահանջել է բանավոր կերպով և, որպես նշված փաստը հիմնավորող ապացույց, վկայակոչում է վկայի (վկաների) ցուցմունքը:

Վկայի կարգավիճակում, որպես կանոն, հանդես են գալիս գործատուի աշխատակիցները, ովքեր, աշխատանքային կախվածություն ունենալով գործատուից, երբեմն պատրաստ են լինում նաև տալ իրականությանը չհամապատասխանող ցուցմունք: Վկայի (վկաների) նման ցուցմունքին հակադրվում է աշխատողի բացատրությունն այն մասին, որ գործատուն իրականում գրավոր բացատրության ներկայացնելու պահանջը չի ներկայացրել գրավոր:

Քննարկվող կարգավորման անորոշությունն իրավունքների չարաշահման տեղիք կարող է տալ և կարող է հանգեցնել անարդար դատական ակտերի կայացմանը ու որպես հետևանք՝ աշխատողների խախտված իրավունքների վերականգնման փաստացի անհնարինությունը: Այսպիսի դեպքերում, փաստորեն, խախտվում է անձի՝ լսված լինելու իրավունքը:

Նշված խնդիրներից խուսափելուն է ուղղված ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածում կատարված լրացումն, ըստ որի՝ գործատուն ձեռք է բերել գրավոր կերպով աշխատողից բացատրություն պահանջելու պարտականություն:

- ✓ ՀՕ-N124-Ն Օրենսգրքում կատարված փոփոխության հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակում փոփոխությունը ներկայացվում է հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, լրացումները՝ գունավորված:

Այսպես՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 9-ին

Հոդված 226. Կարգապահական տույժի կիրառման կարգը

1. Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության:

«Հոդված 226. Կարգապահական տույժի կիրառման կարգը

1. Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության: »:

(226-րդ հոդվածը խմբ. 24.10.18 ՀՕ-404-Ն, փոփ. 23.01.20 76-Ն)





ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՈՒՄ

Տեղեկանք

- ✓ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016թ. հոկտեմբերի 9-ին ընդունված ՀՀ հարկային օրենսգրքում (այսուհետ՝ ՀՕ-165-Ն օրենսգրք) լրացումներ և փոփոխություն է կատարվել 2020թ. հունվարի 24-ին, որը ստորագրվել է 2020թ. փետրվարի 12-ին: Հաշվառման համարը՝ ՀՕ-82-Ն օրենք:
- ✓ ՀՕ-165-Ն օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 26 անգամ:
- ✓ 2020 թվականի հունվարի 24-ին ընդունված ՀՕ-82-Ն օրենքով՝
 - լրացումներ են կատարվել ՀՕ-165-Ն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 47-րդ կետում, 126-րդ¹, 149-րդ² հոդվածներում, 150-րդ հոդվածի 8-րդ մասում.
 - փոփոխություն է կատարվել 126-րդ հոդվածի 5-րդ մասում :
- ✓ 2020թ. հունվարի 24-ին ընդունված ՀՕ-82-Ն օրենքն ուժի մեջ է մտել 2020թ. մարտի 1-ից:
- ✓ ՀՕ-Ն165-Ն Օրենսգրքում կատարված փոփոխությունների հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակում լրացումները ներկայացվում են գունավորված, փոփոխությունը՝ հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով:

Այսպես՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳԻՐՔ

Մ Ա Ս 2 Հ Ա Տ ՈՒ Կ Մ Ա Ս

Բ Ա Ժ Ի Ն 4 Ա Կ Ե Լ Ա Ց Վ Ա Ծ Ա Ր Ժ Ե Ք Ի Հ Ա Ր Կ Ը

Գ Լ ՈՒ Խ 13

Ա Կ Ե Լ Ա Ց Վ Ա Ծ Ա Ր Ժ Ե Ք Ի Հ Ա Ր Կ Ի Ա Ր Տ Ո Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը Ե Վ Ա Կ Ե Լ Ա Ց Վ Ա Ծ Ա Ր Ժ Ե Ք Ի Հ Ա Ր Կ Ի Ջ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Դ Ր ՈՒ Յ Ք Ա Չ Ա Փ Ո Վ Հ Ա Ր Կ ՈՒ Մ Ը

Հոդված 64. Ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներն ու գործառնությունները

1. ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

2. ԱԱՀ-ից ազատվում են Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հետևյալ գործարքներն ու գործառնությունները.

1) հանրակրթական ուսումնական հաստատությունների, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների, արհեստագործական ուսումնարանների, որակավորման և

¹ ՀՕ 82-Ն օրենքով 126-րդ հոդվածում կատարված լրացումների դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

² ՀՕ 82-Ն օրենքով 149-րդ հոդվածում կատարված լրացումների դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

վերաորակավորման, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցումը: Սույն կետում նշված հասկացությունները կիրառվում են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում նույն հասկացությունների կիրառության իմաստով ու նշանակությամբ.

2) դպրոցական գրերի և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների օտարումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

3) Կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական աշխատանքների կատարումը.

4) հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում աշխատանքների կատարումը: Սույն կետով սահմանված արտոնության կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

5) հանրակրթության ոլորտում իրականացվող՝ կրթության և գիտության բնագավառում Կառավարության լիազոր մարմնի ճանաչած, երաշխավորած և Կառավարության սահմանած չափորոշիչներին համապատասխանող կրթական բնույթի առարկայական մրցույթներին, մրցաշարերին, օլիմպիադաներին մասնակցության իրավունքի տրամադրումը.

6) նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատներում, մանկատներում, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատություններում, ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունների մատուցումը, ինչպես նաև խնամվողների կողմից այնտեղ պատրաստված ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը.

7) հասարակական, բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և (կամ) ծառայությունների անհատույց մատուցումը.

8) թաղման բյուրոների, գերեզմանատների, ինչպես նաև մահվան և հուղարկավորության հետ կապված ծիսական բնույթի այլ աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը և համապատասխան պարագաների օտարումը.

9) կրոնական ծիսակատարությունների կազմակերպման ծառայությունների մատուցումը, կրոնական կազմակերպություններին կրոնական պարագաների օտարումը, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների կողմից այդ պարագաների օտարումը.

10) օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և ՀՀ հասարակական, բարեգործական, կրոնական կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների ներմուծումը, ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը՝ մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) շրջանակներում, ինչպես նաև նման ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը: ՀՀ օրենսդրությամբ (այդ թվում՝ ՀՀ միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, ինչպես նաև սույն կետի համաձայն, ԱԱՀ-ից ազատվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների շրջանակները որոշում է Կառավարության լիազոր մարմինը.

11) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների, մասնավորապես հիվանդությունների կանխարգելման, ավտորոշման, բժշկական խորհրդատվության, բուժական, վերականգնողական, բժշկական փորձաքննության անցկացման ծառայությունների մատուցումը.

12) դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը:

13) պետության կամ համայնքի կողմից կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը:

14) բռնագրավման կամ նվիրատվության ձևով ապրանքի մատակարարումը պետությանը: Սույն կետը չի տարածվում բռնագանձման ձևով պետությանը ապրանքի մատակարարման գործարքների վրա, որոնց դեպքում ապրանքի մատակարարման գործարքը ենթակա է ԱԱՀ-ով հարկման Օրենսգրքով սահմանված կարգով:

15) հողամասից կանոնի հրաժարվելու դեպքում սեփականության իրավունքով պատկանող հողամասի օտարումը համայնքին կամ պետությանը:

16) հողամասի կամ այլ անշարժ գույքի փոխանակությունը, եթե այդ գործարքի կողմ են հանդիսանում պետությունը և (կամ) համայնքը:

17) սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը, եթե նշված ծրագրերն արժանացել են Կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանը: Սույն կետում նշված մասնագիտական հանձնաժողովի գործունեության կարգը և կազմը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի՝ որպես արտոնյալ որակավորման, փոփոխման կամ կասեցման կարգերը սահմանում է Կառավարությունը:

18) պետական կառավարման մարմինների և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այն ծառայությունների մատուցումը, որոնց համար օրենքով սահմանված է պետական տուրքի և (կամ) տեղական տուրքի վճարում, ինչպես նաև պետական կառավարչական և (կամ) համայնքային կառավարչական հիմնարկների կողմից ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումն այն մասով, որից հասույթը հաշվեգրվել է պետական կամ համայնքների բյուջեների օգտին: Սույն կետի կիրառության իմաստով՝ հասույթի կամ դրա մի մասի հաշվեգրումը պետական կամ համայնքների բյուջեների օգտին պետք է հիմնավորվի դրանց համապատասխան գանձապետական հաշվին փոխանցմամբ:

19) կոնցեսիոների (օպերատորի) կողմից Կառավարության սահմանած չափանիշների համաձայն Կառավարության լիազոր մարմնի կողմից որպես կոնցեսիայի պայմանագիր որակված գործարքի պայմանների շրջանակներում կոնցեսիոն (շնորհատուին) պատկանող ենթակառուցվածքային ակտիվների, դրանց առանձին տարրերի վրա կատարված բարելավման արդյունքի կամ գնված կամ կառուցված կամ փոխարինված ենթակառուցվածքային ակտիվների (նյութական կամ ոչ նյութական), դրանց կազմում առանձին տարրերի՝ կոնցեսիայի պայմանագրի գործողության ընթացքում կամ ավարտին կոնցեսիոնտին (շնորհատուին) օտարումը, ինչպես նաև կոնցեսիոնտին (շնորհատուին) կոնցեսիոն ծառայությունների մատուցումը: Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. կոնցեսիոնտ (շնորհատու) է համարվում պետական կամ համայնքային մարմինը, որը որոշակի ժամանակահատվածով կոնցեսիոնտին (օպերատորին) է տրամադրում հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ դրանք շահագործելու և (կամ) սպասարկելու նպատակով,

բ. կոնցեսիոնտ (օպերատոր) է համարվում ռեզիդենտ կազմակերպությունը, որին կոնցեսիոնտի (շնորհատուի) կողմից տրամադրվում են հանրային ծառայությունների ենթակառուցվածքներ՝ հանրային ծառայություն մատուցելու և (կամ) այն բարելավելու նպատակով, և որը շահագործում և (կամ) սպասարկում է այդ ենթակառուցվածքները սահմանված ժամանակաշրջանի ընթացքում:

20) ԱՏԳԱԱ 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, 0106 41 000, 0106 90 00 90, 5305 00 000

0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմերի և տնկանյութի օտարումը.

21) անմիջական արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ ԱՏԳԱԱ 570110, 570210 ծածկագրերին դասվող ձեռագործ գորգերի օտարումը.

22) ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի օտարումը.

23) ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու կազմակերպչի և ազատ տնտեսական գոտու շահագործողի համար աշխատանքների կատարումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարումը.

24) թերթերի և ամսագրերի օտարումը.

25) Կառավարության սահմանած ցանկում նշված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի օտարումը.

26) թանկարժեք մետաղների և թանկարժեք մետաղներից պատրաստված՝ ԱՏԳԱԱ 7106, 7108, 7109, 7110, 7113, 7115 ծածկագրերին դասվող՝ ոսկերչական նշանակության կիսապատրաստուկների օտարումը.

27) ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարումը.

28) Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողի կողմից Կառավարության սահմանած չափանիշները բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի օտարումը.

29) խաղատների գործունեության կազմակերպումը.

30) շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի), տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպումը.

31) ապրանքի մատակարարման հրապարակային պայմանագրով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում տվյալ ապրանքի հետ կապված սպասարկման ծառայությունների անհատույց մատուցումը, այդ ծառայությունների շրջանակներում սահմանված որակին չհամապատասխանող ապրանքների, դրանց լրակազմող տարրերի փոխարինման նպատակով ապրանքի անհատույց մատակարարումը, այն ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը, որոնց արժեքը ներառված է հրապարակային պայմանագրերի համաձայն մատակարարվող ապրանքների արժեքում: Սույն կետը կարող է կիրառվել այն դեպքում, երբ կնքված պայմանագրի պայմանները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 442-րդ հոդվածով սահմանված՝ հրապարակային պայմանագրերին ներկայացվող պահանջներին: Այն դեպքերում, երբ ապրանքի մատակարարման հրապարակային պայմանագրով նախատեսվում է այլ ապրանքների մատակարարում և (կամ) ծառայությունների մատուցում, ապա հրապարակային պայմանագրով մատակարարվող ապրանքի արժեքում այլ ապրանքների և (կամ) ծառայությունների արժեքը ներառելու փաստը պետք է հիմնավորվի հաշվապահական հաշվառման մեջ կիրառվող սկզբնական հաշվառման փաստաթղթերով և ԱԱՀ վճարողի կողմից հաստատված փաստաթղթերով (հրաման, հաստատված ինքնարժեքի հաշվարկ և այլն).

32) կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում բաժնեմասի կամ փայի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը.

33) օրենքով սահմանված կարգով իրականացվող՝ կազմակերպության վերակազմակերպման շրջանակներում ապրանքի մատակարարումը և (կամ) ծառայության մատուցումը.

34) սեփականաշնորհման կամ ապապետականացման գործարքների շրջանակներում ապրանքի մատակարարումը.

35) Հայաստանի Հանրապետության տարածք մշակութային արժեքների ներմուծումը.

36) Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգից տարբերվող մաքսային ընթացակարգով (բացառությամբ «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների նկատմամբ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքերի) արտահանված ապրանքների մատակարարումը.

37) օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ունեցող հարկ վճարողի կամ Կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների խմբի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ԶԶ տարածք ապրանքների ներմուծումը, եթե այդ ապրանքները կամ դրանց վերանշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում արտահանվում են (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններ)։

38) ԶԶ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով ԵՏՄ անդամ չհամարվող պետություն արտահանված կամ ԶԶ տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված սև և գունավոր մետաղների քարոզնի մատակարարումը։

39) անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից իրենց անձնական գույքի օտարման գործարքները։

40) անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին պատկանող՝ ժառանգության զանգվածում ներառվող գույքի՝ ժառանգին օտարումը։

41) ԶԶ ժամանող ֆիզիկական անձանց կողմից «Մաքսային կարգավորման մասին» ԶԶ օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը։

42) ԶԶ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց կողմից «Մաքսային կարգավորման մասին» ԶԶ օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը։

43) օտարերկրյա պետություններում գործող ԶԶ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների և ԶԶ դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առևտրական և այլ կցորդների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիների կողմից ծառայության ավարտից հետո «Մաքսային կարգավորման մասին» ԶԶ օրենքով սահմանված՝ իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը։

44) ապահովագրական և վերաապահովագրական ծառայությունների, ներառյալ՝ դրանց հետ կապված՝ ապահովագրական միջնորդների և գործակալների կողմից ծառայությունների մատուցումը։

45) կենսաթոշակային ապահովման ծառայությունների, ներառյալ՝ դրանց հետ կապված՝ միջնորդների և գործակալների կողմից ծառայությունների մատուցումը։

46) «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ԶԶ օրենքի իմաստով նախաձեռնողի կողմից ակտիվների օտարումն արժեթղթավորման հիմնադրամին կամ վաճառողին, վաճառողի կողմից ակտիվների օտարումն արժեթղթավորման հիմնադրամին, «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ԶԶ օրենքով սահմանված դեպքերում նախաձեռնողի կողմից արժեթղթավորման հիմնադրամից ակտիվների հետզնումը կամ արժեթղթավորման հիմնադրամի հետ ակտիվների փոխանակումը, ինչպես նաև ակտիվների օտարումը «Ներդրումային ֆոնդերի մասին» ԶԶ օրենքի համաձայն ստեղծված արժեթղթավորման ֆոնդին, արժեթղթավորման ֆոնդին ակտիվն օտարած անձի կողմից արժեթղթավորման ֆոնդից ակտիվների հետզնումը կամ արժեթղթավորման ֆոնդի հետ ակտիվների փոխանակումը։

47) բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային կազմակերպությունների, վարկային կազմակերպությունների, ինչպես նաև սույն կետով սահմանված դեպքերում՝ այլ հարկ վճարողների կողմից հետևյալ ֆինանսական գործարքների ու գործառնությունների կատարումը։

ա. ցպահանջ, ժամկետային, խնայողական և նման այլ ավանդների ընդունման, բանկային և այլ հաշիվների բացման, վարման ու սպասարկման ծառայությունների, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը,

բ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից վարկերի կամ փոխառությունների տրամադրման, այդ թվում՝ պարտքերի կամ առևտրային գործարքների ֆինանսավորման ու ֆակտորինգային այլ ծառայությունների մատուցումը,

գ. երաշխավորությունների, բանկային երաշխիքների տրամադրման, ակրեդիտիվների բացման ծառայությունների մատուցումը,

դ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից արժեթղթերի օտարումը, արժեթղթերի ի պահ ընդունման և հաշվառման ծառայությունների մատուցումը,

ե. մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի, քարտերի և այլ գործիքների թողարկման, զեղչման, փոխանցման, զիջման կամ սպասարկման ծառայությունների մատուցումը, ինչպես նաև այլ հարկ վճարողների կողմից մուրհակների, չեկերի, վճարագրերի, վճարային այլ արժեթղթերի, վճարային փաստաթղթերի օտարումը,

զ. բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից արտարժույթի (թղթադրամի և մետաղադրամի, բացառությամբ դրամագիտական նշանակություն ունեցող և այդ նպատակով օգտագործվող մետաղադրամների և բանկային տոմսերի) օտարումը և (կամ) փոխանակումը հայկական դրամի հետ, բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների օտարումը, փոխանցումը, փոխանակումը կամ այլ կերպ օտարումը և այդ գործարքներով նախատեսված բոլոր վճարումների կատարումը, բացառությամբ այն վճարումների, որոնք իրականացվում են այնպիսի գույքի փաստացի մատակարարման դիմաց, որի օտարումը Օրենսգրքի համաձայն ենթակա է ԱԱՀ-ով հարկման,

է. կանխիկ տրամադրման ծառայությունների մատուցումը,

ը. բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների և այլ հարկ վճարողների կողմից ներդրումային ֆոնդի կառավարման, ներառյալ՝ իր կողմից կառավարվող (այդ թվում՝ պատվիրակման արդյունքում) ներդրումային ֆոնդի թողարկած արժեթղթերի տեղաբաշխման և (կամ) հետզնման (մարման) ծառայությունների մատուցումը,

թ. ներդրումային ֆոնդի պահառության ծառայության մատուցումը,

ժ. արժեթղթերի հավատարմագրային կառավարման ծառայության մատուցումը,

ժա. բանկային ոսկու օտարումը, բանկային ոսկով արտահայտված հաշիվների բացման ու վարման, դրանցով այլ գործառնությունների կատարման ծառայությունների մատուցումը, ինչպես նաև բանկերին և վարկային կազմակերպություններին բանկային ձուլակտորների օտարումը,

ժբ. օրենքով սահմանված կարգով բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դարձած՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց մինչ այդ պատկանող գրավի առարկայի օտարումը: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ գրավի առարկան մինչև բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դառնալը համարվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհամարվող ֆիզիկական անձանց պատկանող, եթե գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականում նշված չէ, որ այն պատկանում է տվյալ անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին,

ժգ. գումարների (հասույթների, պարտադիր, կոմունալ և այլ վճարների) ընդունման, ինչպես նաև աշխատավարձի, թոշակների, նպաստների, ապահովագրական և այլ վճարների կատարման ծառայությունների մատուցումը,

ժդ. լիզինգային պայմանագրի շրջանակներում բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներմուծված այն ապրանքների ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) օտարումը, որոնց ներմուծման ժամանակ ԱԱՀ-ն օրենսդրությամբ սահմանված կարգով չի հաշվարկվել և չի վճարվել,

ժե. բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական վարձակալության (լիզինգի) ծառայության մատուցումը, եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին,

«ժզ. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով սահմանված ներդրումային ծառայությունների մատուցումը, բացառությամբ արժեթղթերում և ածանցյալ ֆինանսական գործիքներում ներդրումների հետ կապված՝ հաճախորդներին խորհրդատվության տրամադրման ծառայության,

ժէ. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված ոչ հիմնական ծառայությունների մատուցումը, բացառությամբ ընկերությունների վերակազմակերպման հետ



կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցման, ինչպես նաև կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ ընկերություններին խորհրդատվության տրամադրման ծառայությունների,

ժը. կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթերով և ածանցյալ ֆինանսական գործիքներով առևտրի կազմակերպման (միայն գործարքների համար գանձվող միջնորդավճարների մասով), ինչպես նաև կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների (պահանջների) որոշման և հաշվանցման (քլիրինգի) ծառայությունների մատուցումը,

ժթ. կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի պահառության, արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման, քլիրինգի և վերջնահաշվարկի հետ կապված ծառայությունների, ինչպես նաև օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերով կենտրոնական դեպոզիտարիային թույլատրված այլ ծառայությունների (բացառությամբ խորհրդատվական ծառայությունների) մատուցումը, ներառյալ՝ արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամի կողմից այդ ծառայությունների միջնորդավորման ծառայությունների մատուցումը,

ի. շուկա ստեղծողի կարգավիճակով արժեթղթերի երկկողմանի գնանշման ապահովման ծառայությունների մատուցումը:»:

ԱԱՀ-ից չեն ազատվում սույն կետով սահմանված ծառայությունների հետ կապված քաղվածքների և այլ տեղեկությունների ձևակերպման և տրամադրման, արժեթղթերի, չեկերի, վճարագրերի, վճարային փաստաթղթերի, քարտերի, թղթադրամի, մետաղադրամի, բանկային ոսկու պատրաստման, ֆաքսիմիլային ծառայությունների մատուցումը.

48) օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայությունները, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են ՀՀ տարածքում.

49) ներդրումային ֆոնդի կողմից անշարժ գույքի օտարումը տվյալ ներդրումային ֆոնդում մասնակցություն ունեցող անձին, եթե անշարժ գույքը նախկինում ներդրումային ֆոնդի կողմից, որպես ներդրումային ֆոնդում փայի կամ բաժնետոմսի դիմաց ներդրում, ձեռք է բերվել տվյալ անձից.

50) «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակելու նպատակով անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից այն օտարերկրյա ապրանքների՝ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծումը, որոնք իրացվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017թ. ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց.

51) ԵՏՍ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետությունում գործող անմաքս առևտրի խանութներ ԵՏՍ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը.

52) ԵՏՍ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը.

53) Հայաստանի Հանրապետությունում աճեցված տոհմային կենդանի խոշոր եղջերավոր անասունների օտարումը ՀՀ տարածքում.

54) «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19.7-րդ և 19.8-րդ հոդվածներով սահմանված գործուցողական տեսակների շրջանակներում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը:

(64-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 21.12.17 ՀՕ-266-Ն, խմբ. 08.02.18 ՀՕ-124-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-261-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, լրաց. 25.06.19 ՀՕ-68-Ն, 19.06.19 ՀՕ-87-Ն, լրաց.24.01.20 ՀՕ-82-Ն)

(07.06.19 ՀՕ-63-Ն օրենքի 1-ին հոդվածով լրացված 64-րդ հոդվածի 2-րդ մասի 52-րդ կետը գործում է մինչև 2022 թվականի հունվարի 1-ը՝ համաձայն 07.06.19 ՀՕ-63-Ն-ի 2-րդ հոդվածի)

Բ Ա Ժ Ի Ն 6

ՇԱՅՈՒՔԱՅԱՐԿԸ

ՇԱՅՈՒՔԱՅԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ

Գ Լ ՈՒ Խ 23

ՇԱՅՈՒՔԱՅԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յոդված 126. Շահութահարկի վճարումից ազատումը

1. Մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, ինչպես նաև այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը: Այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ տասը տոկոսը գերազանցելու դեպքում սույն մասով նախատեսված արտոնությունը գործում է միայն գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի մասով: Սույն մասի կիրառության իմաստով՝

1) գյուղատնտեսական արտադրանք են համարվում հարկ վճարողի կողմից իրականացված գործողությունների արդյունքում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող, մասնավորապես՝

- ա. հացահատիկային և հացահատիկաուլոռային մշակաբույսերը,
- բ. տեխնիկական մշակաբույսերը,
- գ. պալարապտղային, բանջարային, բոստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը,
- դ. դաշտային մշակման կերային մշակաբույսերը,
- ե. կերարտադրության այլ արտադրանքը,
- զ. պարտեզների, խաղողի այգիների, պտղատու այգիների, հատապտղանոցների և ծաղկաբուծության արտադրանքը,
- է. ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը,
- ը. ծառերի և թփերի սածիլները,
- թ. ծառերի և թփերի տնկիները,
- ժ. անասնաբուծության արտադրանքը,
- ժա. խոզաբուծության արտադրանքը,
- ժբ. ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը,
- ժգ. թռչնաբուծության արտադրանքը,
- ժդ. ձիաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանքը,
- ժե. եղջերվաբուծության և ուղտաբուծության արտադրանքը,
- ժզ. ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը,
- ժէ. ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը.

2) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընդգրկված հարկային տարիների համար գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացվող եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է՝ հիմնվելով Օրենսգրքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 2-ով սահմանված՝ կադաստրային գնահատման կարգով հաշվարկված հաշվարկային զուտ եկամտի տվյալների վրա:

2. Շահութահարկի վճարումից ազատվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը հետևյալ եկամուտների մասով.

1) առևտրային բանկերի կողմից «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վճարվող պարբերական, միանվագ և լրացուցիչ երաշխիքային վճարների մասով.

2) հիմնադրամի կողմից ֆիզիկական անձանց հատուցվող և բանկերի նկատմամբ ձեռք բերվող պահանջի հիման վրա բանկերից ստացվող գումարների մասով.

3) այն եկամուտների մասով, որոնք ստացվել են հետևյալ ակտիվներում կատարված ներդրումներից.

ա. Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերում,

բ. ՀՀ կենտրոնական բանկում և բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա առաջնակարգ բանկերում՝ որպես բանկային ավանդ և (կամ) բանկային հաշիվ,

գ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի արժեթղթերում,

դ. ոսկու ստանդարտացված ձուլակտորներում,

ե. բարձր վարկանիշ ունեցող երկրների կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում,

զ. բարձր վարկանիշ ունեցող առաջնակարգ կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում,

է. հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ այլ ֆինանսական ակտիվներում:

3. Շահութահարկի վճարումից ազատվում է Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված բյուրոն՝ այդ օրենքի համաձայն բյուրոյի կազմում ստեղծված երաշխավորման ֆոնդին կատարվող բոլոր վճարների, ինչպես նաև երաշխավորման ֆոնդի օգտին ստացված բոլոր այլ գումարների մասով, ներառյալ՝ այն եկամուտների մասով, որոնք ստացվել են երաշխավորման ֆոնդի միջոցներից կատարված ներդրումներից:

4. Շահութահարկի վճարումից ազատվում է Համահայկական բանկը:

5. Շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝ Հայաստանի Հանրապետության պետական ~~արտարժույթային~~ պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով:

«5.1. Շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝

1) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների, ինչպես նաև նշյալ բաժնետոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով.

2) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով.

3) ռեզիդենտ իրավաբանական անձին տրամադրած փոխառության գծով եկամուտների մասով, պայմանով, որ տվյալ փոխառությունն ամբողջությամբ ֆինանսավորվել է համարժեք պայմաններով թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման շնորհիվ ու հանդիսանում է այդ պարտատոմսերի ապահովման միջոց, իսկ այդ պարտատոմսերը Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորվող շուկայում թույլատրված են առևտրին:»:

6. Շահութահարկի վճարումից ազատվում են ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող շահութահարկ վճարողները՝ ձեռագործ գորգերի իրացումից ստացվող եկամտի մասով:

7. Շահութահարկի վճարումից ազատվում են ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող շահութահարկ վճարողները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտում իրականացվող գործունեությունից ստացվող եկամտի մասով:

(126-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ., լրաց. 24.01.20 ՀՕ-82-Ն)

Բ Ա Ժ Ի Ն 7
ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԸ
Գ Լ ՈՒ Խ 27

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Հոդված 149. Արժեթղթերից ստացվող եկամուտները

1. Սույն հոդվածով այլ բան սահմանված չլինելու դեպքում հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում նաև՝

1) գանձապետական պարտատոմսերի, պետական այլ արժեթղթերի և Համահայկական բանկի թողարկած պարտատոմսերի գծով ստացվող տոկոսը, մարման ժամանակ ստացվող գեղչը և (կամ) օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտը.

2) կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում մասնակցության (բաժնետոմսի, բաժնենասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, այլ արժեթղթերի հետ փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտը.

3) ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացվող եկամուտը (այդ թվում՝ դրանց օտարումից, փոխանակումից, նման այլ գործարքներից, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից).

«4) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:»:

2. Հարկման բազան որոշելու նպատակով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված եկամուտները չեն համարվում նվազեցվող եկամուտներ (չեն նվազեցվում համախառն եկամտից), եթե՝

1) ստացվում են որպես վճարման միջոց տրված մուրհակի, վճարագրի կամ վճարային այլ արժեթղթի օտարումից.

2) ստացվում են որպես ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման դիմաց հատուցում կամ փոխարինում են այդ հատուցմանը՝ անկախ արժեթղթի դիմաց իրական ներդրման կամ փոխատվության փաստի առկայությունից.

3) ստացվում են կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց) ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնենասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, եթե այդ օտարումը կատարվում է կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում այդ մասնակցությունը (բաժնետոմսը, բաժնենասը, փայաբաժինը) ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվա կամ դրան հաջորդող երեք հարկային տարիների ընթացքում.

4) ստացվում են որպես շահաբաժին **« բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների»:**

(149-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՅՕ-338-Ն, լրաց. 24.01.20 ՅՕ-82-Ն)

Հոդված 150. Եկամտային հարկի դրույքաչափերը

1. Եթե սույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Ժամանակահատված	Եկամտային հարկի դրույքաչափը
2020 թվականի հունվարի 1-ից	23 տոկոս
2021 թվականի հունվարի 1-ից	22 տոկոս
2022 թվականի հունվարի 1-ից	21 տոկոս

2. (մասն ուժը կորցրել է 21.06.18 ՅՕ-338-Լ)

3. ՀՀ օրենսդրության համաձայն՝ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում կուտակված գումարները օրենսդրությամբ սահմանված դեպքերում ֆիզիկական անձի կողմից միանվագ ստանալու դեպքում այդ գումարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցումները:

4. ՀՀ օրենսդրության համաձայն՝ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում ֆիզիկական անձի կողմից իր համար և (կամ) ֆիզիկական անձի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կամավոր կենսաթոշակային վճարների հաշվին սահմանված կարգով ստացվող կենսաթոշակների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցումները:

5. Տոկոսների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 149-րդ հոդվածով սահմանված նվազեցումները:

6. Ռոյալթիների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով:

7. Վարձակալական վճարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով, իսկ հարկային տարվա ընթացքում ստացված վարձակալական վճարների հանրագումարը 60 միլիոն դրամը գերազանցելու դեպքում, գերազանցող մասի համար ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ եկամտային հարկ՝ տասը տոկոս դրույքաչափով:

8. Շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է հինգ տոկոս դրույքաչափով **«՝ հաշվի առնելով Օրենսգրքի 149-րդ հոդվածով սահմանված նվազեցումները»:**

9. Գույքի օտարումից հարկային գործակալներից ստացվող ամբողջ եկամուտների մասով (բացառությամբ սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված դեպքերի) եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով:

10. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարումից (այդ թվում՝ նաև այն դեպքում, երբ գույքն օտարվում է անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից տարբերվող և հարկային գործակալ չհանդիսացող անձի) ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1 տոկոս դրույքաչափով, բայց ոչ պակաս, քան ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի շարժիչի յուրաքանչյուր ձիաուժ հզորության համար 150 դրամից: Շարժիչի հզորությունը կիլովատերով արտահայտված լինելու դեպքում համապատասխան հզորության նկատմամբ կիրառվում է 1.36 գործակից:

11. Կառուցապատողի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարումից ստացված եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

12. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ գույքի օտարում չի համարվում կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում կամ պայմանագրային ներդրումային ֆոնդում գույքի ներդրումը:

13. Եթե հարկային գործակալի կողմից հարկ վճարողներին վճարվող եկամուտների մասով առկա չեն Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթեր, ապա այդ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցումները, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի: Սույն մասով սահմանված չափով եկամտային հարկ չի հաշվարկվում, եթե Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերի բացակայության պայմաններում վճարվող եկամուտների մասով առկա են հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված՝ վճարվող եկամուտները հիմնավորող այլ փաստաթղթեր, որտեղ նշված են ապրանք մատակարարող, աշխատանք կատարող

և (կամ) ծառայություն մատուցող ֆիզիկական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում), անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, անձնագրի (կամ անձը նույնականացնող այլ փաստաթղթի) սերիան և (կամ) համարը:

Օրենսգրքի 116-րդ հոդվածով սահմանված ներկայացուցչական ժախսերի և Օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ֆիզիկական անձանց օգնության, սննդի կազմակերպման, նրանց համար սոցիալ-մշակութային միջոցառումների կազմակերպման և համանման այլ ծախսերի հաշվին ֆիզիկական անձանց կողմից ստացվող դրամական և բնամթերային (ոչ դրամական) ձևով եկամուտների՝ Օրենսգրքի համապատասխանաբար 116-րդ հոդվածով և 120-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված չափերը գերազանցող գումարների նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափով և ներառվում է հարկային տարվան հաջորդող տարվա ապրիլ ամսվա համար հարկային մարմին ներկայացվող եկամտային հարկի հաշվարկում, իսկ հարկային գործակալի լուծարման (հաշվառումից հանվելու կամ նոտարի պաշտոնից ազատվելու) դեպքում՝ լուծարման (հաշվառումից հանվելու կամ նոտարի պաշտոնից ազատվելու) օրը ներառող ամսվա համար հարկային մարմին ներկայացվող եկամտային հարկի հաշվարկում:

14. Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի՝ շահութահարկով հարկման բազան որոշելիս հարկային տարվա ընթացքում անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց վճարվող պասիվ եկամուտները համախառն եկամտից նվազեցնելու դեպքում նվազեցման կատարման հարկային տարվան հաջորդող 12 ամիսների ընթացքում այդ եկամուտները չվճարվելու դեպքում դրանց նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով և ներառվում է 12-րդ ամսվա համար հարկային մարմին ներկայացվող եկամտային հարկի հաշվարկում: Սույն մասի դրույթները չեն վերաբերում բանկերին և վարկային կազմակերպություններին՝ այլ հարկ վճարողներից ներգրավված վարկերի, փոխառությունների և ավանդների դիմաց վճարվող տոկոսների մասով, ինչպես նաև այլ կազմակերպությունների՝ վերջիններիս թողարկած և հրապարակային առաջարկի միջոցով հանրությանը առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտքային արժեթղթերի դիմաց վճարվող գումարների մասով:

15. Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերում կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց) ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից ստացվող եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով:

(150-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, 21.06.18 ՀՕ-338-Ն, փոփ., խմբ. 25.06.19 ՀՕ-68-Ն, լրաց. 24.01.20 ՀՕ-82-Ն)

(21.06.18 ՀՕ-338-Ն օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2019թ. հունվարի 1-ը Կառավարության հավանությանն արժանացած՝ Օրենսգրքի 128-րդ հոդվածով սահմանված ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողի և այդ ծրագրում ընդգրկված ՀՀ այլ ռեզիդենտ շահութահարկ վճարողների նկատմամբ Օրենսգրքի 150-րդ հոդվածի 2-րդ մասը շարունակում է կիրառվել մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:)

(150-րդ հոդվածի 8-րդ մասը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի 1-ից և կիրառվում է 2020թ. հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինների վրա):

(150-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի 71-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ են մտնում 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում են նաև մինչև 25.06.19 ՀՕ-68-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ՝ ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող՝ 2018թ. հուլիսի 1-ից հետո կատարված՝ ավտոմեքենաների օտարման գործարքների նկատմամբ):

ՀԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ

ՀԱՇՎԱՌՄԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԲՆԱԳԱԿԱՌ





ԻՆՉ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՉՈՒՒ Է ԱՅՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ

Հայաստանի Հանրապետությունում թվայնացման առաջընթացի կարևորագույն գրավականներից է էլեկտրոնային թվային ստորագրությունը և դրանով պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառությունը:

Էլեկտրոնային ստորագրության նպատակն է առանց օգտագործելու թուղթը և գրիչը վավերացնել փաստաթուղթը: Էլեկտրոնային ստորագրությունները այժմ լայնորեն կիրառվում են ինչպես մասնավոր իրավահարաբերություններում՝ կնքվում են պայմանագրեր, ուղարկվում են նամակներ, այնպես էլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունները ձեռք բերելիս՝ լրացվում են գրություններ, դիմումներ, բողոքներ, արձանագրություններ և այլն:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ), ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանդես գալով որպես հավատարմագրված հավաստագրման կենտրոն, տրամադրում է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրեր և մատուցում է էլեկտրոնային թվային ստորագրությունների հետ կապված այլ ծառայություններ:

Հարկ է նշել, որ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ կողմից տրամադրված էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված և պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական ուժը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը:

ԻՆՉՊԵՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Էլեկտրոնային թվային ստորագրություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է իրականացնել քայլերի հետևյալ հաջորդականությունը.

1. Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կամ Ձեզ հարմար տարածքային անձնագրային ծառայության գրասենյակից ստանալ նույնականացման քարտ, որի հետ կտրվի հատուկ ծրար՝ PIN և PUK կոդերով
2. Ձեռք բերել նույնականացման քարտ ընթերցող սարք **(սարքը կարող եք ձեռք բերել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ գրասենյակից՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ, 10-րդ սենյակ)**
3. www.ekeng.am կայքից տեղադրել անհրաժեշտ ծրագրերը
4. Ակտիվացնել նույնականացման քարտի PIN և PUK կոդերը
5. Կատարել տարեկան սպասարկման վճարը (այն կազմում է 3000 ՀՀ դրամ)
6. Գրանցվել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ «Անձնական էջում»
7. Կիրառել էլեկտրոնային թվային ստորագրությունը ինչպես մասնավոր իրավահարաբերություններում, այնպես էլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող բազմաթիվ ծառայությունները կամ գործողությունները ձեռք բերելիս:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ՝
ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀՂՈՒՄՆԵՐՈՎ՝
ՍԿԶԲԻՑ ՄԻՆՁԵՎ ՎԵՐՋ**

Սկիզբը (հոդված 1-ից 83-ը)՝ «Գործք» ամսագրի 107-119-րդ համարներում

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

**Մ Ա Ս 2
ՀԱՏՈՒԿ ՄԱՍ**

**Բ Ա Ժ Ի Ն 5
ԱԿՑԻՉԱՅԻՆ ՀԱՐԿԸ**

**ԳԼՈՒԽ 17
ԱԿՑԻՉԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ,
ՀԱՐԿՄԱՆ ԲԱՉԱՆ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

Հոդված 93. Հաշվանցումների (պակասեցումների) կատարման սահմանափակումները

1. Օրենսգրքի 91-րդ և 95-րդ հոդվածներով սահմանված կարգով բյուջե վճարման ենթակա կամ բյուջեից փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումարների հաշվարկման նպատակով ակցիզային հարկի հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարում՝

1) ակցիզային հարկ վճարող չհամարվողները.

Օրինակ
ՀՀ հարկային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի
վերաբերյալ

Եթե կազմակերպությունն ակցիզային հարկ վճարող չի համարվում, սակայն 2020թ. հունվարի 8-ին ձեռք է բերել ապրանքներ, որոնց մասով ստացել է հարկային հաշիվ՝ առանձնացված ակցիզային հարկով և 2020թ. հունվարի 18-ին վաճառել է այդ ապրանքերը (որոնք համարվում են ակցիզային հարկով հարկվող գործարքներ), ապա, քանի որ կազմակերպությունը չի համարվում ակցիզային հարկ վճարող, վերջինս կատարված ձեռքբերումների մասով ակցիզային հարկի գումարները հաշվանցելու իրավունք չունի:

2) Եթե ձեռք բերված և (կամ) ներմուծված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա հումքը վերագրվում է ակցիզային հարկից ազատված գործարքներին, բացառությամբ Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերի.

Օրինակ №1
ՀՀ հարկային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի
վերաբերյալ

Ակցիզային հարկ վճարող համարվող Ա կազմակերպությունը զբաղվում է ՀՀ-ում կոնյակ արտադրող կազմակերպություններին 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չՀՀալցված կոնյակի մատակարարմամբ, որոնց մասով ՀՀ տարածքից կատարել է ձեռքբերումներ և ստացել է հարկային հաշիվներ՝ 40 միավոր ակցիզային հարկի գումարով:

Տվյալ դեպքում, քանի որ նշված գործարքն ազատված է ակցիզային հարկից, այդ գործունեության հետ կապված ձեռքբերումների մասով 40 միավոր ակցիզային հարկի գումարը հաշվանցման ենթակա չէ:

Օրինակ №2
ՀՀ հարկային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի
վերաբերյալ

Ակցիզային հարկ վճարող համարվող Ա կազմակերպությունը զբաղվում է անմաքս առևտրի խանութի կազմակերպչին ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարմամբ:

Միաժամանակ, այդ ապրանքների մատակարարման գործարքների հետ կապված ՀՀ տարածքից կատարում է ձեռքբերումներ:

Տվյալ դեպքում, անմաքս առևտրի խանութի կազմակերպչին ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման գործարքների հետ կապված ձեռքբերումների մասով ստացված հարկային հաշիվներում առանձնացված ակցիզային հարկի գումարները ենթակա են հաշվանցման, քանի որ Օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում սահմանված է բացառություն:

3) Եթե հարկային հաշիվը Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 55-րդ կետի համաձայն համարվում է անապրանք փաստաթուղթ.

Օրինակ
ՀՀ հարկային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի
վերաբերյալ

Եթե ակցիզային հարկ վճարող համարվող կազմակերպությունը գործունեության ընթացքում դուրս է գրել հարկային հաշիվ՝ առանց փաստացի ապրանքի մատակարարման (Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 55-րդ կետի համաձայն՝ անապրանք փաստաթուղթ է դուրս գրել), ապա այդ հարկային հաշվում առանձնացված ակցիզային հարկի գումարները հարկային հաշիվը ստացողի կողմից հաշվանցման ենթակա չեն:

4) եթե հարկային հաշվին վերաբերող գործարքը Օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն ճանաչվել է անվավեր:

Պարզաբանում

ՀՀ հարկային օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի վերաբերյալ

Եթե կազմակերպության կողմից իրականացված գործարքը դատարանի վճռով անվավեր է ճանաչվել, ապա այդ գործարքի մասով դուրս գրված հարկային հաշվում առանձնացված ակցիզային հարկի գումարները հաշվանցման ենթակա չեն:

Հոդված 94. Պարտավորությունների ու հաշվանցումների (պակասեցումների) վերաձևակերպման կարգը

1. Ակցիզային հարկ վճարողների կողմից ձեռք բերված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի կորստի դեպքում այդ հումքին վերաբերող ակցիզային հարկի գումարները ենթակա չեն հաշվանցման (պակասեցման), եթե այդ կորուստները, Օրենսգրքի 6-րդ բաժնի համաձայն, հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն: Օրենսգրքի 6-րդ բաժնի համաձայն՝ կորուստների մեծությունը տարեկան կտրվածքով սահմանված լինելու դեպքում ակցիզային հարկի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում կորստի տարեկան նորմայի համեմատությամբ ավել հաշվարկված ակցիզային հարկի հաշվանցվող (պակասեցվող) գումարը տարեկան արդյունքներով վերահաշվարկվում է տվյալ տարվա ակցիզային հարկի վերջին հաշվետու ժամանակաշրջանում՝ տարբերությունը դիտարկելով որպես վերջին հաշվետու ժամանակաշրջանում ակցիզային հարկի հաշվանցվող (պակասեցվող) գումարի պակասեցում:

Պարզաբանում №1

ՀՀ հարկային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ

Եթե կազմակերպության կողմից ձեռք է բերվել հումք, որի մասով կատարվել են ակցիզային հարկի գծով համապատասխան հաշվանցումներ, սակայն հետագայում տեղի է ունեցել տվյալ հումքի կորուստ, ապա այդ հումքին վերաբերող ակցիզային հարկի գումարները ենթակա չեն հաշվանցման, եթե այդ կորուստները, Օրենսգրքի 6-րդ բաժնի համաձայն, հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն:

Պարզաբանում №2

ՀՀ հարկային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ

Եթե կազմակերպության կողմից ձեռք է բերվել հումք, որի մասով կատարվել են ակցիզային հարկի գծով համապատասխան հաշվանցումներ, սակայն հետագայում տեղի է ունեցել տվյալ հումքի կորուստ, ապա այդ հումքին վերաբերող ակցիզային հարկի գումարները ենթակա են հաշվանցման, եթե այդ կորուստները, Օրենսգրքի 6-րդ բաժնի համաձայն, հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման ենթակա են:

Պարզաբանում №3

ՀՀ հարկային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ

Եթե կազմակերպության կողմից ձեռք է բերվել հումք, որի մասով կատարվել են ակցիզային հարկի գծով համապատասխան հաշվանցումներ, սակայն հետագայում տեղի է ունեցել տվյալ հումքի կորուստ, ընդ որում այդ կորուստները, Օրենսգրքի 6-րդ բաժնի համաձայն, հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցման ենթակա են և տվյալ հումքի համար կորուստների մեծությունը տարեկան կտրվածքով սահմանված է 100 միավոր, ապա ակցիզային հարկի յուրաքանչյուր հաշվետու

ժամանակաշրջանում կորստի տարեկան նորմայի համեմատությամբ ավել հաշվարկված ակցիզային հարկի հաշվանցվող (պակասեցվող) գումարը տարեկան արդյունքներով 70 միավոր կազմելու դեպքում, այդ 70 միավորը դեկտեմբեր ամսվա համար ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով ենթակա է պակասեցման ակցիզային հարկի հաշվանցվող (պակասեցվող) գումարից:

2. Եթե ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ներկայացվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի ներմուծման (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծման) ճշտված մաքսային կամ հարկային հայտարարագրով նախկինում ներկայացված՝ ներմուծման մաքսային կամ հարկային հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումարները նվազում են, ապա ներմուծման մաքսային կամ հարկային հայտարարագրում և ներմուծման ճշտված մաքսային կամ հարկային հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումարների տարբերությունը նվազեցվում է ներմուծման ճշտված մաքսային կամ հարկային հայտարարագրի գրանցման կամ հարկային մարմին ներկայացման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի գումարներից:

Պարզաբանում

ՀՀ հարկային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ

Եթե կազմակերպության կողմից ԵՏՄ անդամ պետությունից ներմուծվում է ակցիզային հարկով հարկման ենթակա հումք, որի մասով 31.01.2020թ.-ին ներկայացվում է ներմուծման հարկային հայտարարագիր 100 միավոր ակցիզային հարկի գումարով, սակայն հետագայում պարզվում է, որ ներմուծման հարկային հայտարարագիրը ենթակա է ճշգրտման, իսկ ակցիզային հարկի գումարը՝ 40 միավորով նվազեցման և ճշտված հարկային հայտարարագիրը հարկային մարմին է ներկայացվում 01.04.2020թ.-ին, ապա այդ 40 միավոր ակցիզային հարկի գումարը նվազեցվում է ապրիլ ամսվա համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի գումարներից:

3. Եթե ակցիզային հարկով հարկման ենթակա հումքի ներմուծման գծով մաքսային մարմնի կողմից իրականացվող հետբացթողումային ստուգման արդյունքում ներմուծման մաքսային հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումարները նվազում են, ապա ներմուծման մաքսային հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումարների նվազած մասը նվազեցվում է հետբացթողումային ստուգման ակտի կազմման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցման (պակասեցման) ենթակա ակցիզային հարկի գումարներից:

Պարզաբանում

ՀՀ հարկային օրենսգրքի 94-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ

Եթե կազմակերպությունը 2020թ. հունվարի 11-ին «Քաջ թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ՀՀ տարածք ներմուծված ապրանքների ակցիզային հարկի մասով հաշվանցումները Օրենսգրքով սահմանված կարգով կատարել է 2020թ. հունվար ամսվա համար ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով և մարտի 18-ին մաքսային մարմնի կողմից իրականացվող հետբացթողումային ստուգման արդյունքում ներմուծման մաքսային հայտարարագրում առանձնացված ակցիզային հարկի գումարները նվազել են, ապա ակցիզային հարկի գումարների նվազած մասը նվազեցվում է 2020թ. մարտ ամսվա համար ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով:



4. Հաշվանցված (պակասեցված) ակցիզային հարկի գումարների մասով սույն հոդվածով սահմանված դեպքերում և կարգով վերաձևակերպումներ (նվազեցումներ) չկատարելը Օրենսգրքի 403-րդ հոդվածի կիրառության իմաստով համարվում է հարկային հաշվարկում հարկի գումարը պակաս ցույց տալ:

Հոդված 95. Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումարի հաշվարկման կարգը

1. Ակցիզային հարկ վճարողներին հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումարը հաշվարկվում է որպես այդ ժամանակաշրջանում իրականացված՝ Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ակցիզային հարկի գումարի և Օրենսգրքի 92-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվանցվող (պակասեցվող) ակցիզային հարկի գումարների (եթե Օրենսգրքի 93-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ) բացասական տարբերություն (այսուհետ՝ ակցիզային հարկի փոխհատուցվող գումար):

Օրինակ

ՀՀ հարկային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ

Եթե ակցիզային հարկ վճարող համարվող կազմակերպությունը 2020թ. հունվար ամսվա ընթացքում իրականացրել է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման գործարքներ, որոնց մասով ակցիզային հարկի գումարը կազմել է 600 միավոր, նույն ամսվա ընթացքում իրականացրել է ակցիզային հարկով հարկվող գործարքներին ուղղակիորեն վերագրվող ձեռքբերումներ, որոնց մասով ակցիզային հարկի գումարը կազմել է 900 միավոր, ապա հունվար ամսվա արդյունքներով պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը կազմում է 300 (600-900) միավոր:

2. Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով առաջացող ակցիզային հարկի փոխհատուցվող գումարն ուղղվում է հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող՝ պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարների, ինչպես նաև Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքում արձանագրվող՝ ակցիզային հարկի լրացուցիչ գումարների մարմանը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

Օրինակ

ՀՀ հարկային օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ

Եթե ակցիզային հարկ վճարող համարվող կազմակերպության հունվար ամսվա արդյունքներով պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումարը կազմում է 300 միավոր, իսկ փետրվար ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի արդյունքներով առաջանում է 200 միավորի պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումար, ապա 300 միավոր փոխհատուցման ենթակա ակցիզային հարկի գումարն ուղղվում է պետական բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի գումարի մարմանը:

3. Օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների ու գործառնությունների իրականացման դեպքում ակցիզային հարկի փոխհատուցվող գումարները ակցիզային հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում են միասնական հաշվին, եթե հարկ վճարողն ունի ակցիզային հարկի փոխհատուցվող գումար:

Օրինակ

ՀՀ հարկային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ

Եթե ակցիզային հարկ վճարող համարվող կազմակերպությունը 2020թ. հունիսի 21-ի դրությամբ ունի ակցիզային հարկի փոխհատուցվող գումար (այսինքն՝ յուրաքանչյուր ամսվա համար ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով առաջացած պարտավորությունները մարելուց հետո առկա է փոխհատուցվող գումար), ապա այդ գումարը վերջինիս գրավոր դիմումի հիման վրա Օրենսգրքի 17-րդ բաժնով սահմանված կարգով իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին, որից հետագայում կարող է մարվել նաև այլ հարկային պարտավորություն կամ այդ գումարը հարկ վճարողի դիմումի հիման վրա հետ վերադարձվել:

Հոդված 96. ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով միասնական հաշվարկների ներկայացումը

1. Ակցիզային հարկ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Ակցիզային հարկ վճարողները Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված հարկման օբյեկտների մասով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ չեն ներկայացնում:

Օրինակ

ՀՀ հարկային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ

Եթե կազմակերպության կողմից «Բացթողնում» ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ՀՀ տարածք է ներմուծվում ապրանք, ապա այդ ներմուծման գործարքի մասով կազմակերպության կողմից ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ չի ներկայացվում:

Պարզաբանում

ՀՀ հարկային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ

Եթե կազմակերպության կողմից ԵՏՍ անդամ պետություններից փոխադարձ առևտրի շրջանակներում ՀՀ տարածք է ներմուծվում ապրանք, որը ենթակա է ակցիզային հարկով հարկման, ապա այդ ներմուծման գործարքի մասով կազմակերպության կողմից ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ չի ներկայացվում:

Հոդված 97. ԵՏՍ անդամ պետություններ արտահանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարման գործարքների՝ ակցիզային հարկից ազատումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՍ անդամ պետություններ արտահանված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՍ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մատակարարման գործարքների՝ ակցիզային հարկից ազատումը հիմնավորվում է արտահանման հարկային հայտարարագիրը արտահանողի կողմից հարկային մարմին ներկայացնելու օրը:

Պարզաբանում

ՀՀ հարկային օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ 2020թ. հունվարի 1-ից ակցիզային հարկից ազատումը հիմնավորվում է արտահանման հարկային հայտարարագիրը արտահանողի կողմից հարկային մարմին ներկայացնելու օրը՝ անկախ անուղղակի հարկերի վճարման վերաբերյալ հայտարարությունը հարկային մարմին ներկայացնելու հանգամանքից:

2. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության տարածքից ԵՏՍ անդամ պետություններ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտահանումն իրականացվում է հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրերի հիման վրա, համապատասխանաբար հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից, իսկ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ արտահանման հարկային հայտարարագիրը հարկային մարմին է ներկայացվում համապատասխանաբար հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից, ապա արտահանված ապրանքների մատակարարման գործարքների՝ ակցիզային հարկից ազատումը համապատասխանաբար հանձնարարողի, կոմիտենտի կամ պրինցիպալի մոտ կարող է հիմնավորվել, եթե համապատասխան հաշվարկային փաստաթղթերով հիմնավորվի հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից արտահանողի ապրանքների արտահանման փաստը:

Հոդված 98. ԵՏՍ անդամ պետություններից ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծման դեպքում հարկային մարմին ներկայացվող փաստաթղթերը

1. ԵՏՍ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՍ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման դեպքում (այդ թվում՝ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում) հարկ վճարողը պարտավոր է մինչև ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը:

2. Այն դեպքում, երբ ԵՏՍ անդամ պետություններից ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՍ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվում հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրերի հիման վրա՝ համապատասխանաբար հանձնակատարի, կոմիսիոների կամ գործակալի կողմից, կամ ԵՏՍ անդամ այլ պետության ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատության կողմից կամ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տոնավաճառի մասնակցի կողմից, Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը համապատասխանաբար հանձնակատարը, կոմիսիոները կամ գործակալը կամ ԵՏՍ անդամ այլ պետության ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշտական հաստատությունը կամ Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տոնավաճառի կազմակերպիչը հարկային մարմին է ներկայացնում մինչև այդ ապրանքները կամ դրանց մի մասը գնորդին օտարելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:


3. Այն դեպքում, երբ գնորդի կողմից ԵՏՍ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՍ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների նկատմամբ սեփականության իրավունքը գնորդին է անցնում Հայաստանի Հանրապետության տարածքում, Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը գնորդը հարկային մարմին է ներկայացնում մինչև այդ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը իրենց անցնելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Պարզաբանում

ՀՀ հարկային օրենսգրքի 98-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ

Եթե ակցիզային հարկ վճարող համարվող կազմակերպության կողմից հունվարի 10-ին Ռուսաստանից ներմուծվել են ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ, որոնց նկատմամբ սեփականության իրավունքը Ռուսաստանում հաշվառված կազմակերպությունից ՀՀ-ում հաշվառված կազմակերպությանն է անցել ապրիլի 17-ին, ապա ներմուծման հարկային հայտարարագիրը և ապրանքների ներմուծման և անուղակի հարկերի վճարման մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը ՀՀ-ում հաշվառված կազմակերպության կողմից հարկային մարմին է ներկայացվում մինչև մայիսի 20-ը:

Հ Ա Մ Ա Ր
ՆՈՒԱՆ ԳԻՆԻ



ՕՐԳԱՆԻԿ



AM-BIO-112
Armenian Agriculture



Բաժինը վարում է ՖՀՄՍ-ների միջազգային մասնագետ Ավետիք Մովսիսյանը

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖՀՄՍ-ՆԵՐՈՒՄ

ՆՅՈՒԹՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է «ԳՈՐԾՔ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

Ավետիք Մովսիսյանը դասավանդման և խորհրդատվության մեծ փորձառությամբ ՖՀՄՍ (Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների) մասնագետ է:

Նա պարբերաբար անցկացնում է ՖՀՄՍ-ների խորացված դասընթացներ գլխավոր հաշվապահների, աուդիտորների և ֆինանսական բնագավառի այլ մասնագետների համար: Շուրջ 15-ամյա դասավանդման կարիերայի ընթացքում Ավետիք Մովսիսյանը անցկացրել է ՖՀՄՍ-ների դասընթացներ Հայաստանում գործող շատ առաջատար կազմակերպությունների ֆինանսական մասնագետների համար:

Ավետիք Մովսիսյանը համատեղության կարգով որպես դասախոս աշխատում է մի շարք ուսումնական կենտրոններում և որպես խորհրդատու՝ մի շարք աուդիտորական ընկերություններում:

2009թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ավետիք Մովսիսյանը հրավիրվել է որպես ՖՀՄՍ-ների պաշտոնական թարգմանության խմբի փորձագետ: Նա նաև հեղինակել է ՖՀՄՍ-ներով հաշվապահական հաշվառում վարելուն առնչվող տարբեր հոդվածներ և գրքույկներ:

Որպես իր մասնագիտական ունակությունների հաստատում՝ Ավետիք Մովսիսյանը 2011թ.-ին ACCA-ի կողմից ստացել է ՖՀՄՍ-ների մասնագետի որակավորում (DipIFR) և հանդիսանում է Հայաստանում այդ որակավորումն ունեցող առաջին մասնագետներից մեկը:

ՖՀՄՍ-16 Վարձակալություն

Սկիզբը՝ 121-րդ համարում

Գլուխ 5

Վարձակալության հաշվապահական հաշվառումը վարձատուի մոտ

Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալության հաշվապահական հաշվառումը բավականին պարզ է: Ակտիվը մնում է վարձատուի հաշվեկշռում՝ դասակարգվելով համապատասխան ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն: Վարձակալության գործարքի գծով ծախսումները սկզբնապես պետք է ավելացնել ակտիվի արժեքին և հետագայում ճանաչել ծախս՝ վարձակալական եկամտին համամասնորեն:

Գործառնական վարձակալության գծով եկամուտը ճանաչվում է վարձակալության ընթացքում հավասարաչափ (գծային հիմունքով), բացառությամբ այն դեպքերի, երբ այլ պարբերական հիմունքը ավելի ճիշտ է ներկայացնում վարձակալության շրջանակներում ակտիվի օգտագործումից տնտեսական օգուտների նվազումը:

Օրինակ 7 - Կազմակերպությունը զբաղվում է ավտոմեքենաների վաճառքով և վարձույթով: Ավտոտրահում ներկայացված վաճառքի ենթակա ավտոմեքենաներից մեկը, որի հաշվեկշռային արժեքը 15 մլն դրամ է, տրվում է վարձակալության 8 ամիս ժամկետով: Ամսական վարձավճարը 300,000 դրամ է, բայց վերջին 2 ամիսների համար պայմանագրով նախատեսվում է 40% զեղչ: Սեզոնային առանձնահատկություններից ելնելով՝ պայմանագրում առկա է նաև հետևյալ սահմանափակումը ավտոմեքենայի շահագործման վերաբերյալ. 3-6-րդ ամիսների ընթացքում ամսական վազքը չպետք է գերազանցի 4000 կմ-ը, իսկ մնացած ամիսների համար՝ 5000 կմ-ը: Գործարքի ձևակերպման գծով վարձատուին կատարում է 108,000 դրամի չափով ծախսումներ: Ավտոմեքենայի օգտակար ծառայությունը գնահատվում է 10 տարի, մնացորդային արժեքը՝ 0, մաշվածության մեթոդը՝ ուղիղ գծային:

Վարձակալության մեկնարկին ավտոմեքենան վերադասակարգվում է պաշարից դառնալով հիմնական միջոց, որի արժեքին ավելանում են նաև գործարքի գծով ծախսումները՝ դարձնելով հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը 15,108,000 դրամ: Վարձակալության գծով՝

Ամիս	Ստացման ենթակա գումար	Շահագործման սահմանափակում (կմ)	Հաշվեգրվող եկամուտ
1.	300,000	5000	300,000
2.	300,000	5000	300,000
3.	300,000	4000	240,000
4.	300,000	4000	240,000
5.	300,000	4000	240,000
6.	300,000	4000	240,000
7.	180,000	5000	300,000
8.	180,000	5000	300,000
Ընդամենը	2,160,000	36000	2,160,000

Իսկ ծախսերը կճանաչվեն հետևյալ չափերով.

Ամիս	Գործարքի ծախսումներ մաշվածք (Հաշվեգրվող եկամուտների համամասնությամբ)	Ավտոմեքենայի մաշվածք (ըստ օգտակար ծառայության գնահատումների)
1.	15,000	125,000
2.	15,000	125,000
3.	12,000	125,000
4.	12,000	125,000
5.	12,000	125,000
6.	12,000	125,000
7.	15,000	125,000
8.	15,000	125,000
Ընդամենը	108,000	1,000,000

Գլուխ 6

Վարձակալության հաշվապահական հաշվառումը վարձատուի մոտ Ֆինանսական վարձակալություն

Ֆինանսական վարձակալության պարագայում վարձատուն պետք է ապաճանաչի վարձակալության տրված ակտիվը և ճանաչի դեբիտորական պարտք՝ ստացվելիք հատուցումների գծով: Տնտեսական բովանդակությամբ այս գործարքը նման է ակտիվի վաճառքին, որի դիմաց հատուցումը ստացվելու է հետագա ժամանակաշրջաններում, որտեղ ժամանակի ազդեցությունը արտացոլվում է տոկոսների տեսքով: Հաճախ այս գործարքը համեմատվում է նաև փոխառության տրամադրման հետ, որտեղ տրամադրվող դրամական միջոցին փոխարինում է գույքը:

Այս հաշվառման պահանջները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

✓ Որոշել վարձակալության գծով հատուցումները (այն կոչվում է *վարձակալությունում համախառն ներդրումներ*) վարձակալության ժամկետի համար՝ ըստ սույն հոդվածի 3-րդ գլխի, որոնք կախված պայմանագրից ներառում են հետևյալ հնարավոր բաղադրիչները՝

- հաստատուն վճարներ՝ հանած խրախուսական վճարներ.
- ինդեքսից կամ այլ փոփոխականից կախված ոչ հաստատուն վճարներ՝ հաշվարկված գնահատման օրվա դրույթամբ կիրառելի փոփոխականով.
- վարձակալության վերջում վարձակալի կողմից ակտիվի ձեռքբերման արժեքը, եթե կա այդպիսի օպցիոն և դրա իրագործելիությունը համարվում է շատ հավանական.
- վարձակալության վաղաժամկետ դադարեցման գծով տուգանքը, եթե կա այդպիսի օպցիոն, դրա իրագործելիությունը համարվում է շատ հավանական և այն հաշվի է առնվել վարձակալության ժամկետը որոշելիս.

- վարձակալության ժամկետի վերջի դրությամբ գնահատված մնացորդային արժեքը, եթե վարձակալության վերջում սեփականության իրավունքը չի փոխանցվելու վարձակալին, կամ չկա գնման օպցիոն, որի իրագործելիությունը շատ հավանական է: Մնացորդային արժեքի այս գնահատականը իր մեջ ներառում է և երաշխավորված, և չերաշխավորված բաղադրիչները:

- ✓ Որոշել ակտիվի իրական արժեքը.
- ✓ Որոշել գործարքի (պայմանագրի ստացման/ձեռքբերման) գծով ծախսումները.
- ✓ Հաշվարկել վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը՝ այն զեղչման դրույքը, որի կիրառմամբ վարձակալության գծով հատուցումների ներկա արժեքը հավասար է ակտիվի իրական արժեքի և գործարքի գծով ծախսումների հանրագումարին:

✓ Վարձակալության մեկնարկին ապաճանաչել վարձակալության տրված ակտիվը և ճանաչել ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտք, իսկ տարբերությունը ձևակերպել որպես ակտիվի օտարումից օգուտ կամ վնաս: Դեբիտորական պարտքը հաշվարկվում է վարձակալությունում համախառն ներդրումների ներկա արժեքով՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով և կոչվում է *վարձակալությունում գուտ ներդրումներ*:

Օրինակ 8ա – Կազմակերպությունը սարքավորում է հանձնում ֆինանսական վարձակալության՝ 3 տարով, որը համարվում է չեղյալ չհամարվող ժամանակաշրջան: Պայմանագիրը հաստատվում է 2020թ.-ի մարտի 1-ին (կոչվում է **վարձակալության սկիզբ**), ըստ որի՝ օգտագործման իրավունքը փոխանցվում է 2020թ.-ի հուլիսի 1-ին (կոչվում է **վարձակալության մեկնարկ**): Գործարքի ձևակերպման գծով վարձակալության սկզբին վարձատուն կատարում է 400,000 դրամի ծախսումներ: Սարքավորման իրական արժեքը վարձակալության սկզբի դրությամբ կազմում է 60 մլն դրամ: Վարձակալության ավարտին՝ 2023թ.-ի հունիսի 30-ին, վարձակալը պարտավոր է ակտիվը հետ վերադարձնել (չկա գնման օպցիոն) այնպիսի վիճակում, որ այն ունենա առնվազն 5 մլն դրամ իրական արժեք: Ավելի ցածր արժեքի պարագայում վարձակալը պարտավոր է փոխհատուցել տարբերությունը: Վարձատուի գնահատմամբ վարձակալության ավարտին ակտիվի մնացորդային արժեքը կազմում է 8 մլն դրամ: Յուրաքանչյուր կիսամյակի համար վարձավճարը ենթակա է վճարման կիսամյակի սկզբին և հավասար է 10 մլն դրամ բա-

զային վարձավճար՝ ճշտված վճարման պահի դրությամբ վերջին մեկ տարվա սպառողական գների ինդեքսի փոփոխությամբ: 2020թ.-ի հուլիսի 1-ին նշված ինդեքսի տարեկան փոփոխությունը կազմում է 2%: Վարձակալության գործարքը խրախուսելու համար կազմակերպությունը վարձակալին փոխհատուցում է տեղանքի նախապատրաստման և սարքավորման տեղափոխման նպատակով կատարված 2 մլն դրամ ծախսումները՝ առաջին կիսամյակի վարձավճարի նվազեցման տեսքով: Վարձակալության մեկնարկին ակտիվի հաշվեկշռային արժեքը վարձատուի մոտ կազմում է 53 մլն դրամ:

Վարձակալությունում համախառն ներդրումները կկազմեն 67,2 մլն դրամ՝ կազմված հետևյալ բաղադրիչներից՝

- հաստատուն վճարներ՝ 60 մլն դրամ (6 կիսամյակ),
- խրախուսական վճարներ՝ 2 մլն դրամ,
- փոփոխական հատուցումներ՝ 1.2 մլն դրամ (60x2%),
- մնացորդային արժեք՝ 8 մլն դրամ, որից 5 մլն դրամը կոչվում է **երաշխավորված մնացորդային արժեք**, իսկ 3 մլն դրամը՝ **չերաշխավորված մնացորդային արժեք**:

ՖՅՄՍ 16-ում այս հատուցում 67,2 մլն դրամից 64,2 մլն դրամը կոչվում է *վարձավճարներ* (նախկին նվազագույն վարձավճարների փոխարեն), իսկ 3,0 մլն դրամը կոչվում է *չերաշխավորված մնացորդային արժեք*:

Վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը կկազմի 6.09%՝ ըստ հետևյալ հաշվարկի.

Ամիս, ամսաթիվ	Սպասվող հատուցում (վարձակալությունում համախառն ներդրում)	Օրերի քանակ	Սպասվող հատուցման ներկա արժեք վարձակալության սկզբի դրությամբ
01/07/2020	10,200,000-2,000,000=8,200,000	122	$8,200,000 / (1 + 0.0609) \times 122 / 365 = 8,039,542$
01/01/2021	10,200,000	306	$10,200,000 / (1 + 0.0609) \times 306 / 365 = 9,706,742$
01/07/2021	10,200,000	487	$10,200,000 / (1 + 0.0609) \times 487 / 365 = 9,426,281$
01/01/2022	10,200,000	671	$10,200,000 / (1 + 0.0609) \times 671 / 365 = 9,149,475$
01/07/2022	10,200,000	852	$10,200,000 / (1 + 0.0609) \times 852 / 365 = 8,885,116$
01/01/2023	10,200,000	1036	$10,200,000 / (1 + 0.0609) \times 1036 / 365 = 8,624,202$
30/06/2023	8,000,000	1217	$8,000,000 / (1 + 0.0609) \times 1217 / 365 = 6,568,642$
	67,200,000		$60,000,000 + 400,000 = 60,400,000$

01.07.2020թ.-ին պետք է ապաճանաչել վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի 53 մլն դրամ հաշվեկշռային արժեքը, ճանաչել ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտք վարձակալությունում զուտ ներդրման չափով, որը կկազմի 61,605,500 դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

Ամիս, ամսաթիվ	Սպասվող հատուցում (վարձակալությունում համախառն ներդրում)	Օրերի քանակ	Սպասվող հատուցման ներկա արժեք վարձակալության մեկնարկի դրությամբ
01/07/2020	10,200,000-2,000,000=8,200,000	0	8,200,000
01/01/2021	10,200,000	184	$10,200,000 / (1 + 0.0609) \times 184 / 365 = 9,900,475$

01/07/2021	10,200,000	365	10,200,000/ (1+0.0609) ^{365/365} =9,614,416
01/01/2022	10,200,000	549	10,200,000/ (1+0.0609) ^{549/365} =9,332,086
01/07/2022	10,200,000	730	10,200,000/ (1+0.0609) ^{730/365} =9,062,450
01/01/2023	10,200,000	914	10,200,000/ (1+0.0609) ^{914/365} =8,796,329
30/06/2023	8,000,000	1095	8,000,000/ (1+0.0609) ^{1095/365} =6,699,744
	67,200,000		61,605,500

Իսկ տարբերությունը 8,205,500 (61,605,500-53,000,000-400,000) դրամի չափով կճանաչվի օգուտ:
Կկատարվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

Ամսաթիվ	Դ-տ հաշիվ	Կ-տ հաշիվ	Գումար	Նկարագրություն
01/03/2020	224	252	400,000	Գործարքի գծով ծախսումներ
01/07/2020	146	111	53,000,000	Ակտիվի ապաճանաչում
01/07/2020	146	224	400,000	Գործարքի գծով ծախսումներ
01/07/2020	146	621	8,205,500	Օտարումից օգուտ
01/07/2020	146	147	5,594,500	Չվաստակած ֆինանսական եկամուտ

Ի տարբերություն ՀՀՄՍ17-ի, ՀՀՄՍ 16-ում վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքի սահմանման մեջ հատուկ չի նշված, որ այն պետք է հաշվել վարձակալության սկզբին: Սակայն ստանդարտի ընդհանուր բովանդակության վերլուծություններից և այլ մասնագիտական մեկնաբանություններից բխում է, որ այն սկզբնապես պետք է որոշել վարձակալության սկզբին:

Հետագայում չվաստակած ֆինանսական եկամուտը (դիտարկվող օրինակում՝ 5,594,500 դրամը) հաշվեգրվում է որպես ֆինանսական եկամուտ այնպես, որ վարձակալության ժամանակաշրջանում ապահովվի հաստատուն պարբերական դրույք վարձակալությունում զուտ ներդրումների մնացորդի նկատմամբ: Սովորաբար դա հենց վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքն է:

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքի հետագա հաշվառման համար կիրառվում են «Ֆինանսական գործիքներ» ՀՀՄՍ 9 ստանդարտի պահանջները: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր ժամանակաշրջանի վերջում անհրաժեշտ է գնահատել արժեզրկումը՝ ակնկալվող պարտքային կորստի¹ չափով: Իսկ սպասվող հոսքերի վերանայման դեպքերում (ինդեքսի փոփոխություն, վճարման ժամանակացույցի փոփոխություն, որևէ օպցիոնի գծով սպասվող հոսքի վերանայում, երաշխավորված մնացորդային արժեքի վերանայում) հաշվարկվում է վերանայված հոսքերի ներկա արժեքը վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, իսկ տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնաս: Այլ կերպ ասած՝ տոկոսադրույքի փոփոխություն չի կատարվի, քանի որ այդպես է նախատեսում ֆինանսական գործիքների ամորտիզացված արժեքով հաշվառումը ըստ ՀՀՄՍ 9-ի (տե՛ս «Գործք» ամսագրի 36 համարը²):

1 «Գործք» ամսագրի առաջիկա համարներում կիրառարկվի մասնագիտական հոդված ՀՀՄՍ9-ի պահանջով ակնկալվող պարտքային կորուստի գնահատման վերաբերյալ:

2 «Գործք» ամսագրի 36-րդ համարում հոդվածը հրապարակված է ըստ ՀՀՄՍ39-ի պահանջների, սակայն այդ մասով ՀՀՄՍ9-ի պահանջը նույնն է:

Օրինակ 8բ – Ենթադրենք «Ցա» օրինակում 2021թ.-ի դեկտեմբերի 31-ին սպառողական գների ինդեքսի տարեկան փոփոխությունը կազմում է 1.5% (մինչ այդ պահպանվել էր 2% ցուցանիշը): Կողմերի համաձայնությամբ փոխվում է նաև կիսամյակային բազային վարձավճարը՝ 10 մլն դրամից դառնալով 11 մլն դրամ, ինչպես նաև վճարման ժամանակացույցը՝ դառնալով կանխավճարայինից հետվճարային:

2021թ.-ի դեկտեմբերի 31-ին ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքի նախնական մնացորդը՝ առանց ակնկալվող պարտքային կորստի, կկազմի 37,036,544 դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

Ամիս, ամսաթիվ	Սպասվող հատուցում (վարձակալությունում համախառն ներդրում)	Օրերի քանակ	Սպասվող հատուցման ներկա արժեք (վարձակալությունում զուտ ներդրում)
01/01/2022	10,200,000	1	$10,200,000 / (1 + 0.0609) \cdot 1 / 365 = 10,198,348$
01/07/2022	10,200,000	182	$10,200,000 / (1 + 0.0609) \cdot 182 / 365 = 9,903,683$
01/01/2023	10,200,000	366	$10,200,000 / (1 + 0.0609) \cdot 366 / 365 = 9,612,858$
30/06/2023	8,000,000	547	$8,000,000 / (1 + 0.0609) \cdot 547 / 365 = 7,321,655$
	38,600,000		37,036,544

Վերանայման արդյունքում կիսամյակային վարձավճարը կկազմի $11,000,000 + 11,000,000 \times 1.5\% = 11,165,000$: Իսկ վերանայված հոսքերի ներկա արժեքը (վարձակալությունում զուտ ներդրումները) կկազմեն.

Ամիս ամսաթիվ	Սպասվող հատուցում (վարձակալությունում համախառն ներդրում)	Օրերի քանակ	Սպասվող հատուցման ներկա արժեք (վարձակալությունում զուտ ներդրում)
01/01/2022	0	1	0
01/07/2022	11,165,000	182	$11,165,000 / (1 + 0.0609) \cdot 182 / 365 = 10,840,649$
01/01/2023	11,165,000	366	$11,165,000 / (1 + 0.0609) \cdot 366 / 365 = 10,522,310$
30/06/2023	$11,165,000 - 8,000,000 = 19,165,000$	547	$19,165,000 / (1 + 0.0609) \cdot 547 / 365 = 17,539,939$
	41,495,000		38,902,898

Այսպիսով՝ առաջանում է $38,902,898 - 37,036,544 = 1,866,354$ դրամի չափով դեբիտորական պարտքի աճ և եկամուտ, իսկ հաջորդ ժամանակաշրջանների ֆինանսական եկամուտը կհաշվեգրվի սկզբնական 6.09% դրույքով:

Այնուամենայնիվ, եթե նվազում է չերաշխավորված մնացորդային արժեքի գնահատականը, ապա անհրաժեշտ է վերահաշվարկել վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը այնպես, կարծես վարձակալության մեկնարկին կիրառվել էր նոր գնահատականը: Արդյունքում վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը կնվազի և անհրաժեշտ է վերահաշվարկել նախորդ ժամանակաշրջաններում հաշվեգրված ֆինանսական եկամուտը, իսկ տարբերությունը ճանաչել որպես ծախս ընթացիկ հաշվետու ժամանակաշրջանում:

Օրինակ 8գ – Ենթադրենք «Ցա» օրինակում վարձատուն 2021թ.-ի դեկտեմբերի 31-ին վերանայում է չերաշխավորված մնացորդային արժեքը՝ գնահատելով այն 1 մլն դրամ՝ նախկին 3 մլն դրամի փոխարեն: Տվյալ պահին ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքը՝ առանց ակնկալվող պարտքային կորուստի, կկազմի 37,036,544 դրամ՝ ըստ օրինակ «Ցբ»-ի հաշվարկի (Ենթադրվում է, որ սպառողական գների ինդեքսի փոփոխությունը նույնն է):

Եթե ի սկզբանե չերաշխավորված մնացորդային արժեքը կազմեր 1 մլն դրամ, ապա վարձակալությունում համախառն ներդրումները, համապատասխանաբար, կկազմեին 65,2 մլն դրամ, իսկ վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը՝ 4.43%: Իսկ 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքը, առանց ակնկալվող պարտքային կորուստի, կկազմեր 35,579,831 դրամ (Ենթադրվում է, որ սպառողական գների ինդեքսի փոփոխությունը նույնն է), որը հավասար է տվյալ պահի դրությամբ մնացորդային վարձակալությունում համախառն ներդրումների (36,600,000 դրամի) ներկա արժեքին՝ հաշվարկված 4.43% վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով:

Այսպիսով, 2021թ. դեկտեմբերի 31-ին չերաշխավորված մնացորդային արժեքի գնահատականի նվազեցման պատճառով կճանաչվի 1,465,713 դրամի ծախս (37,036,544-35,579,831=1,465,713)՝ որպես արդեն ճանաչված ֆինանսական եկամուտների ճշգրտում, իսկ հաջորդ ժամանակաշրջանների ֆինանսական եկամուտը կհաշվեգրվի վերանայված 4.43% դրույքով:

Առանձնահատկությունն արտադրող կամ դիլեր վարձակալի մոտ

Եթե ֆինանսական վարձակալության վարձակալը տվյալ ակտիվի արտադրողն է կամ դիլերը (այսինքն՝ ֆինանսական վարձակալության միջոցով օտարվում է սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթակա պաշարը), ապա գործում են հետևյալ առանձնահատկությունները.

- ✓ Պաշարի իրացումից հասույթը պետք է հաշվարկել որպես վարձավճարների (չի ներառում չերաշխավորված մնացորդային արժեքը) ներկա արժեք՝ զեղչված շուկայական տոկոսադրույքով, բայց ոչ ավել, քան ակտիվի իրական արժեքն է:
- ✓ Դեբիտորական պարտքը պետք է հաշվարկել նախորդ կետով որոշված հասույթի գումարին՝ ավելացնելով չերաշխավորված մնացորդային արժեքի ներկա արժեքը՝ զեղչված շուկայական տոկոսադրույքով:
- ✓ Վարձակալության հանձնված պաշարի հաշվեկշռային արժեքը ամբողջությամբ ապաճանաչվում է, իսկ որպես վաճառքի ինքնարժեք ճանաչվում է պաշարի հաշվեկշռային արժեքը՝ հանած չերաշխավորված մնացորդային արժեքի ներկա արժեքը:
- ✓ Գործարքի գծով ծախսումները ճանաչվում են որպես ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:



**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՅԻ
2017Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 58-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ**

Տեղեկանք

- ✓ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017թ. փետրվարի 24-ի «Հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվության ձևը, լրացման կարգը, հաշվետվության հրապարակման և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 58-Ն հրամանում (այսուհետ՝ N 58-Ն Հրաման) փոփոխություն է կատարվել 2020թ. փետրվարի 4-ին, որը ստորագրվել է 2020թ. փետրվարի 4-ին: Հաշվառման համարը՝ N103-Ն:
- ✓ N 58-Ն Հրամանում փոփոխություններ են կատարվել 2 անգամ:
- ✓ 2020թ. փետրվարի 4-ին ընդունված N103-Ն հրամանով փոփոխություն է կատարվել N58-Ն Հրամանի Հավելված 2-ի 11-րդ կետում:
- ✓ 2020թ. փետրվարի 4-ին ընդունված N103-Ն հրամանն ուժի մեջ է մտել 2020թ. փետրվարի 20-ից:
- ✓ N 58-Ն Հրամանում կատարված փոփոխության հիման վրա ինկորպորացված տարբերակում փոփոխությունը ներկայացվում է հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, նորը՝ գունավորված:

Այսպես՝

«Գրանցված է»

ՀՀ արդարադատության նախարարության կողմից

28 փետրվարի 2017թ.

Պետական գրանցման թիվ 12417111

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՅԻ**

24 փետրվարի 2017թ.

N 58-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ,
ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՎ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ և 39-րդ հոդվածները, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածը՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվության ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:



2. Հաստատել հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվության լրացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հաստատել հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվության հրապարակման և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացման կարգը՝ համաձայն N3 հավելվածի:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Վ. Հարությունյան

Հավելված N 1

Մնացել է անփոփոխ

Հավելված N 2

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017թ. փետրվարի 24-ի N 58-Ն հրամանի

ԿԱՐԳ

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՀՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ

1. Հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) 1-ին կետում լրացվում են հիմնադրամի՝ լրիվ անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման համարը, պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը, ՀՎՀՀ-ն, հեռախոսը (այդ թվում՝ բջջային), պաշտոնական ինտերնետային կայքը և էլեկտրոնային փոստը: Եթե հաշվետու տարվա ընթացքում հիմնադրամը չի ունեցել պաշտոնական կայք, ապա 1.7-րդ ենթակետը կարող է բովանդակել այդ մասին նշում կամ չլրացվել:

2. Հաշվետվության 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերը լրացվում են, եթե հաշվետու տարվա ընթացքում այդ կետերում նշված անձինք օգտվել են հիմնադրամի միջոցներից և ծառայություններից:

3. Հաշվետվության 6-րդ կետում լրացվում է անձեռնմխելի կապիտալի չափը՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ: Նշված կետը լրացնում են միայն անձեռնմխելի կապիտալով հիմնադրամները:

4. Հաշվետվության 7-րդ կետում լրացվում է անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամտի չափը:

5. Հաշվետվության 8-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում ֆինանսավորման աղբյուրները (ստացված դրամական միջոցների հանրագումարը) ըստ ֆինանսավորումն իրականացրած անձանց խմբերի, ներառյալ՝ անձեռնմխելի կապիտալի համալրման նպատակով տրամադրված դրամական միջոցները: Ընդ որում տվյալ խմբում մի քանի ծրագրերով ֆինանսավորման առկայության դեպքում առանձին տողով նշվում է միայն յուրաքանչյուր ծրագիրը և համապատասխան ֆինանսավորման չափը:

6. Հաշվետվության 9-րդ կետում լրացվում են հիմնադրի կողմից հաշվետու տարվա ընթացքում կատարված (այդ թվում՝ անձեռնմխելի կապիտալի համալրման նպատակով) ներդրումները: Ընդ որում, դրամական միջոցների դեպքում լրացվում է հանրագումարը, իսկ գույք ներդրելու դեպքում՝ յուրաքանչյուր գույքի տեսակը և արժեքը:

7. Հաշվետվության 10-րդ կետում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում հիմնադրամին կատարած գույքային (բացառությամբ դրամական միջոցների) նվիրատվությունները և նվիրաբերությունները՝ ըստ նվիրատվություն/նվիրաբերություն կատարած անձանց խմբերի, ներառյալ՝ անձեռնմխելի կապի-

տալի համալրման նպատակով տրամադրված գույքը: Ընդ որում, տվյալ խմբում մի քանի գույքի առկայության դեպքում առանձին տողով նշվում է միայն յուրաքանչյուր գույքի տեսակը և արժեքը:

8. Հաշվետվության 11-րդ կետում լրացվում է հաշվետու տարվա ընթացքում իրականացված յուրաքանչյուր ծրագրի անվանումը և յուրաքանչյուր ծրագրի համար ծախսված գումարի չափը:

9. Հաշվետվության 12-րդ կետում լրացվում է հաշվետու տարվա ընթացքում օգտագործված միջոցների ընդհանուր չափը, ներառյալ՝ կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը, պահպանման ծախսերը և այլն:

10. Հաշվետվության 13-րդ կետում լրացվում է հաշվետու տարվա ընթացքում միայն կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի ընդհանուր չափը:

11. Աուդիտորական եզրակացությունը կցվում է հաշվետվությանը, եթե հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը:

«11. Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը կցվում է հաշվետվությանը, եթե հաշվետու տարվա վերջի դրությամբ հիմնադրամի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը:»

(11-րդ կետը խմբ. 04.02.20 N 103-Ն)

12. Հաշվետվությունը ստորագրվում է հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարի ու գլխավոր հաշվապահի կողմից և հաստատվում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից՝ նշելով համապատասխան որոշման ամսաթիվը:

13. Եթե հաշվետու տարվա ընթացքում հիմնադրամը չի գործել, միջոցների հոսքեր չեն եղել, ապա հաշվետվության մեջ արտացոլվում են միայն 1-ին կետում լրացվող տեղեկությունները և կատարվում է նշում այն մասին, որ հիմնադրամը չի գործել, գույք չի օգտագործվել, ծրագրեր չեն իրականացվել, ֆինանսական հոսքեր չեն եղել:

14. Հաշվետվությունը համարվում է թերի, եթե լրացման ենթակա տեղեկության առկայության դեպքում այն չի պարունակում N1 հավելվածի ձևում նշված տեղեկություններից որևէ մեկը կամ պարունակում է ակնհայտ հակասություններ:

15. Հաշվետվությունը լրացվում է ՀՀ դրամով:

(հավելվածը խմբ. 11.05.18 N 310-Ն, 04.02.20 N 103-Ն)

Հավելված N 3 Մնացել է անփոփոխ



«2019Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»

ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Գործք» ամսագրի կողմից հայտարարված «2019թ. ՀՀ լավագույն հաշվապահ» մրցույթի ընտրական վեցերորդ փուլով ավարտվում է «2019թ. ՀՀ լավագույն հաշվապահ» մրցույթը:

Ամփոփվել են մրցույթի 6-րդ փուլի և մրցութային տարվա ընթացքում առավելագույն միավորներ ստացած անձանց արդյունքները: Նրանք են՝

- Քրիստինա Քարամյան («Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ, գլխավոր հաշվապահ)՝ մրցույթի 6-րդ փուլում ձեռք է բերել 18 միավոր, տարվա արդյունքներով՝ 139 միավոր.

- Անուշ Սաքեյան («Երևանի պողպատյա խողովակների գործարան «Մետալ Ստիլ» ՓԲԸ գլխավոր հաշվապահի տեղակալ)՝ մրցույթի 6-րդ փուլում ձեռք է բերել 21 միավոր, տարվա արդյունքներով՝ 138 միավոր.

- Արման Ամրոյան («Հայ-ռուսական համալսարան» ՊՈԱԿ գլխավոր հաշվապահ)՝ մրցույթի 6-րդ փուլում ձեռք է բերել 17 միավոր, տարվա արդյունքներով՝ 62 միավոր:

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՌԱՋԻՆԻՑ ՎԵՑԵՐՈՐԴ ՓՈՒԼԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2019Թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՌՅԱԿԸ

ԳԼԽԱՎՈՐՈՒՄ ԵՆ



Քրիստինա Քարամյան
«Բնակարան երիտասարդներին»
ՎՎԿ
Գլխավոր հաշվապահ



Անուշ Սաքեյան
Երևանի պողպատյա խողովակների
գործարան «Մետալ Ստիլ» ՓԲԸ
Գլխավոր հաշվապահի
տեղակալ



Արման Ամրոյան
«Հայ-ռուսական
համալսարան» ՊՈԱԿ
Գլխավոր հաշվապահ

Առաջատար եռյակի անդամների անունը և ազգանունը	I փուլ	II փուլ	III փուլ	IV փուլ	V փուլ	VI փուլ	Տարեկան ամփոփ արդյունքները	
	միավորը / տեղը	միավորը / տեղը	միավորը / տեղը	միավորը / տեղը	միավորը / տեղը	միավորը / տեղը	միավորը	տեղը
Քրիստինա Քարամյան	26 / 1	26 / 1	24 / 1	21 / 2	24 / 1	18 / 1	139	1
Անուշ Սաքեյան	20 / 4	26 / 2	26 / 2	27 / 1	18 / 2	21 / 2	138	2
Արման Ամրոյան				26 / 5	19 / 4	17 / 3	62	3

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝
«2019Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԸ ԿԿԱՅԱՆԱ
2020Թ. ՄԱՐՏԻ 13-ԻՆ



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ... ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է 2020 ԹՎԱԿԱՆԻ «ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԸ

«2020 Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՎԱԿԱՆ I ՓՈՒԼ

«2020թ. ՀՀ լավագույն հաշվապահ» ամվանակարգում հայտարարված մրցույթի 11-րդ պարբերաշրջանի 1-ին ընտրական փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 10 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 5 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 15 միավոր:

Առաջին փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Առաջին փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2020թ. մարտի 29-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2020թ. մարտի 30-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեգր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2021 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ

Հարց 1. Նշվածներից ո՞րը չի համարվում պետական հարկ՝

- ա) ավելացված արժեքի հարկը.
- բ) անշարժ գույքի հարկը.
- գ) բնապահպանական հարկը.
- դ) ճանապարհային հարկը:

Հարց 2. Եթե ՀՕ 39-րդ հոդվածի 1-4-րդ կետերով և 2-րդ մասի 1-ին կետով նշված չէ՝ ծառայությունը համարվում է մատուցված ՀՀ տարածքում, թե՛ ոչ, ապա ծառայությունը համարվում է մատուցված՝

- ա) ծառայությունը մատուցող կազմակերպության գտնվելու վայրը.
- բ) ծառայությունը ստացող կազմակերպության գտնվելու վայրը:

Հարց 3. Փոխառության տրամադրումը հանդիսանում է արդյոք ԱԱՀ-ով հարկման օբյեկտ՝

- ա) այո.
- բ) ոչ:

Հարց 4. Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը պետք է՝

- ա) ճանաչվի սեփական կապիտալում.
- բ) ճանաչվի սեփական կապիտալում, սակայն եթե այդ աճը հակադարձում է նախկինում այդ ակտիվի վերագնահատումից արժեքի նվազմանը, որը ճանաչվել էր որպես ծախս, ապա աճը այդ չափով պետք է ճանաչվի որպես եկամուտ՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում.
- գ) ճանաչվի որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, սակայն եթե այդ աճը հակադարձում է նախկինում այդ ակտիվի վերագնահատումից արժեքի նվազմանը, որը ճանաչվել էր որպես ծախս, ապա աճը այդ չափով պետք է ճանաչվի սեփական կապիտալում.
- դ) ճանաչվի որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հարց 5. Երբ այլ արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող նյութերի ինքնարժեքը բարձր է դրանց իրացման զուտ արժեքից՝

- ա) նյութերի ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման զուտ արժեք վաճառքի համար պահվող ապրանքներին համանման ձևով, եթե կազմակերպությունն ընտրել է այդ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը.

բ) նյութերի ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման զուտ արժեք միայն այն դեպքում, երբ ակնկալվում է, որ դրա միջոցով արտադրվելիք պատրաստի արտադրանքի ինքնարժեքը գերազանցելու է իրացման զուտ արժեքին:

- գ) նյութերի ինքնարժեքը ընդհանրապես չի իջեցվում մինչև դրանց իրացման զուտ արժեք:
- դ) նշված բոլոր պատասխաններն էլ սխալ են:

Ջաբ 6. Իրացման զուտ արժեքը՝

- ա) վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած անուղղակի հարկերը:
- բ) սովորական վաճառքի ժամանակ ձևավորվող գինն է:
- գ) սովորական վաճառքի ժամանակ ձևավորվող գինն է՝ հանած չփոխհատուցվող հարկերը և այլ պարտադիր վճարները:
- դ) սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Ջաբ 7. Կազմակերպության կողմից տրամադրված երկարաժամկետ փոխառությունների գծով չվաստակած ֆինանսական եկամտի արտացոլում՝

- ա) Դեբետ 342
Կրեդիտ 147:
- բ) Դեբետ 145
Կրեդիտ 147:
- գ) Դեբետ 147
Կրեդիտ 145:

Ջաբ 8. Թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի արտացոլում՝

- ա) Դեբետ 311
Կրեդիտ 314 .
- բ) Դեբետ 311
Կրեդիտ 312:
- գ) Դեբետ 312
Կրեդիտ 311:

Ջաբ 9. Որպես շնորհ տրամադրված նյութերի արտացոլում՝

- ա) Դեբետ 541
Կրեդիտ 211:
- բ) Դեբետ 421
Կրեդիտ 211:
- գ) Դեբետ 728
Կրեդիտ 211:

Հարց 10.

Աշխատանքի վճարման գծով հիմնական միջոցների վրա կապիտալացվող ծախսումների արտացոլում՝

- ա) Դեբետ 154
Կրեդիտ .
- բ) Դեբետ 823
Կրեդիտ 527.
- գ) Դեբետ 111
Կրեդիտ 527:

«2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»

**ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ
ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼԻ
ԽՆԴԻՐԸ**

«Ա-ԷՅ-ԲԻ» կազմակերպությունը պետական գրանցում է ստացել 01.02.2020թ.-ին: Սահմանված ժամկետում ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ դիմում: Կազմակերպության գործունեությունից ստացված եկամուտները և ծախսերը հետևյալն են՝

Հ/Հ	Բովանդակություն	Եկամուտ	Ծախս
1	Բեռնափոխադրում	1 200 000	
2	Առևտրական գործունեություն	5 450 000	5 800 000
3	Վարձակալություն	800 000	600 000
4	Հանրային սննդի ծառայություն	2 600 000	560 000
5	Արտադրություն	520 000	368 000
6	Անհատույց ստացված	980 000	

Բոլոր գործարքները վերաբերում են 2020թ.-ի փետրվար-մարտ ամիսներին:

Որոշել 2020թ.-ի առաջին եռամսյակի վճարման ենթակա շրջանառության հարկը:

ԿԱՌՐԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԲՆԱԳԱԿԱՌ



ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ՂԵԿՎՎԱՐ՝ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ

Հարգելի ընթերցող

«Գործք» ամսագրի սույն 122-րդ համարում Ձեզ ենք ներկայացնում հասարակայնության հետ կապերի ղեկավարի աշխատանքի (պաշտոնի) նկարագրությունը և աշխատանքի անվտանգության հրահանգը:

Մեր կողմից ներկայացված պաշտոնների նկարագրությունները և աշխատանքի անվտանգության հրահանգները մշակվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ.-ի N872-Ն հրամանով հաստատված աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգչի, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. N873-Ն հրամանով հաստատված զբաղմունքների դասակարգչի (ՀԴ-009-2013), ISO-88-ի, պահանջներին համապատասխան:

Պաշտոնների նկարագրությունները և աշխատանքի անվտանգության հրահանգները մեր կողմից տպագրվում են «Գործք» ամսագրում, որպեսզի օգնենք գործատուներին կիրառելու Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի (ընդունված 03.05.1996թ.-ին՝ Ստրասբուրգում, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 01.03.2004թ.) 2-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Պաշտոնների ներկայացման առաջնահերթությունը որոշում էք Դուք, իսկ մենք ներկայացնում ենք դրանք՝ ըստ Ձեր պահանջի:

Հասարակայնության հետ կապերի ղեկավարի աշխատանքի (պաշտոնի) նկարագրությունը և աշխատանքի անվտանգության հրահանգը Հայաստանի Հանրապետությունում գործող աշխատողների, մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների ընդհանուր թվաքանակի՝ 10916-ի մեջ թվով ընդամենը 38-րդն է: Նախորդ 37 պաշտոնների նկարագրության և աշխատանքի անվտանգության հրահանգների մասին կարող եք ծանոթանալ «Գործք» ամսագրի հետընթաց համարներում՝ սկսած 79-րդ համարից:



ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ **ՂԵԿՎԱՐԻ ԶԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ**

1. Պաշտոնի անվանումը՝

Ղեկավար՝ հասարակայնության հետ կապերի (այսուհետ՝ հասարակայնության հետ կապերի ղեկավար)։

2. Զբաղմունքի դասակարգչի կոդը՝ 1234.

3. Մասնագիտության և մասնագիտացման կոդը՝ 2180090.

4. Աշխատանքի բնույթը՝

Հասարակայնության հետ կապերի ղեկավարն ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի «ՀՀ տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության, աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգիչ» հաստատելու և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2011թ. հունվարի 25-ի N 26-Ն հրամանն ուժը կորցրած ծանաչելու մասին» N872-Ն հրամանի պատկանում է ղեկավարների կատեգորիային։

5. Աշխատանքի պայմանները՝

Հասարակայնության հետ կապերի ղեկավարի աշխատանքը համարվում է ոչ ծանր և առողջության համար ոչ վնասակար աշխատանք։

6. Աշխատաժամանակի ռեժիմը՝

Հասարակայնության հետ կապերի ղեկավարի աշխատաժամանակի ռեժիմը սահմանվում է «_____» (այսուհետ՝ Կազմակերպություն) ներքին կարգապահական կանոններով։

7. Հիմնական գործառույթները՝

- ✓ ապահովում է կազմակերպության ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց մամուլի ասուլիսների, հարցազրույցների, ճեպազրույցների, հասարակական հետաքրքրություններ կայացնող թեմաների վերաբերյալ հայտարարությունների կազմակերպումը և անցկացումը, մամուլի հաղորդագրությունների պատրաստումը.
- ✓ ապահովում է մամուլի հաղորդագրությունների տարածումը, իր իրավասությունների շրջանակներում հանդես է գալիս պարզաբանումներով ու հայտարարություններով.
- ✓ ծանուցում է անմիջական ղեկավարին և այլ պաշտոնատար անձանց՝ զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած կարևոր նյութերի մասին և անհրաժեշտության դեպքում ապահովում դրանց օպերատիվ արձագանքը.
- ✓ առաջարկություններ է ներկայացնում զանգվածային լրատվության միջոցներով ելույթներում, մշտական թեմատիկ խորագրերում, հեռուստառադիոհաղորդումներում կազմակերպության պաշտոնատար անձանց մասնակցության վերաբերյալ և ապահովում է դրանց կատարումը.
- ✓ ապահովում է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ աշխատանքային հանդիպումների կազմակերպումը.
- ✓ ապահովում է կազմակերպության գործունեության ոլորտին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերի ամփոփման և վերլուծման աշխատանքները.
- ✓ ապահովում է կազմակերպության ինտերնետային էջի սպասարկումը, հրապարակման ենթակա նյութերի և դրանցում կատարված փոփոխությունների հրապարակումը.
- ✓ ապահովում է կազմակերպության թեժ գծի սպասարկումը.

- ✓ ապահովում է քաղաքացիների դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման արդյունքների մասին հասարակությանը տեղեկացման գործընթացը.
- ✓ ապահովում է համագործակցությունը այլ կազմակերպությունների համապատասխան ստորաբաժանումների հետ.
- ✓ կազմակերպում է տեղեկություն տալու կարգի մշակումը և հրապարակումը.
- ✓ ապահովում է կազմակերպության կողմից վարվող էլեկտրոնային տեղեկատվական բազաների վարման աշխատանքները.
- ✓ տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում ապահովում է հեռուստաֆիլմերի, տեսանյութերի պատրաստումը և տեղեկագրերի թողարկումը.
- ✓ ապահովում է կազմակերպության մյուս ստորաբաժանումներից անհրաժեշտ տեղեկությունների և նյութերի ստացումը, և անհրաժեշտության դեպքում կազմակերպում դրանց լուսաբանումն ու հանրային քննարկումը.
- ✓ ղեկավարությանը առաջարկություններ է ներկայացնում բաժնի աշխատողներին վերապատրաստելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.
- ✓ առաջարկություններ է ներկայացնում բաժնի աշխատողների բացակայության դրանց փոխարինելու մասին.
- ✓ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիների ընդունելություն.
- ✓ անմիջական ղեկավարին ներկայացնում է բաժնի աշխատանքային ծրագրերը.
- ✓ բաժնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
- ✓ բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, անմիջական ղեկավարի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ.
- ✓ ըստ անհրաժեշտության ներկայացնում է համապատասխան գեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին.
- ✓ լուծում է բաժնի առջև դրված գործողություններից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ.
- ✓ բաժնի աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ.
- ✓ բաժնի աշխատողներից մեկի բացակայության ժամանակ փոխարինում է նրան.
- ✓ կատարում է անմիջական ղեկավարի հանձնարարականները.
- ✓ իրականացնում է սույն պաշտոնի նկարագրությամբ սահմանված այլ լիազորություններ:

8. Մասնագիտական գիտելիքների և աշխատանքային փորձի նկատմամբ պահանջները՝

- ա) Հասարակայնության հետ կապերի ղեկավարի աշխատակցի պաշտոնում նշանակվում է բակալավրական կամ մագիստրոսական բարձրագույն կրթություն ունեցող և սահմանված ծրագրով մասնագիտական պատրաստվածություն անցած, զանգվածային լրատվության բնագավառում աշխատանքի 3 տարուց ոչ պակաս աշխատանքային փորձ ունեցող անձը.
- բ) Հասարակայնության հետ կապերի ղեկավարից պահանջվում է կատարել միջին, բարդ և առավել բարդ աշխատանքներ:

9. Հասարակայնության հետ կապերի ղեկավարը պետք է իմանա՝

- «Հանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը.
- պետական կառավարման մարմինների լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող փաստաթղթերը.
- տեղեկատվության հավաքման, մշակման և վերլուծության աշխատանքներ իրականացնելու հմտությունները, ինչպես նաև գերազանց տիրապետի հայոց լեզվին, գրական խոսքին.
- գործարար էթիկայի կանոնները.
- աշխատանքի անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները.

- խմբագրման մեթոդները.
- համակարգչային տեխնիկայի օգտագործման կանոնները.
- կապի և հաղորդակցության միջոցներից օգտվելու մեթոդները:

10. Հասարակայնության հետ կապերի ղեկավարի պաշտոնում նշանակումը՝

Հասարակայնության հետ կապերի ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է (աշխատանքային պայմանագիր կնքում և աշխատանքային պայմանագիրը լուծում է) Կազմակերպության ղեկավարը:

11. Կառուցվածքային ստորաբաժանումը՝

Հասարակայնության հետ կապերի ղեկավարի պաշտոնն ընդգրկված է Կազմակերպության ներքին կառուցվածքային միավոր համարվող ----- ստորաբաժանում¹:

Ընդհանուր ժողով



Տնօրեն



Հասարակայնության հետ կապերի ղեկավար

12. Ենթակայությունը՝

Հասարակայնության հետ կապերի ղեկավարն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Կազմակերպության տնօրենին:

13. Հասարակայնության հետ կապերի ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները՝

13.1. Հասարակայնության հետ կապերի ղեկավարն իրավունք ունի՝

13.1.1. սահմանված կարգով ղեկավարներից, առանձին ստորաբաժանումներից, բաժիններից պահանջել և ստանալ իր պաշտոնեական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր.

13.1.2. անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցել Կազմակերպության կողմից իրականացվող նիստերին, ժողովներին, այլ միջոցառումներին.

13.1.3. իր անմիջական ղեկավարին ներկայացնել իր գործունեությանը վերաբերող առաջարկներ, որոնք կնպաստեն աշխատանքային գործունեության կատարելագործմանը.

13.1.4. դիմել ղեկավարությանը՝

- ✓ իր պաշտոնեական պարտականությունների և իրավունքների իրականացմանը աջակցելու հարցով.
- ✓ կազմակերպության (բաժնի) գործունեության բարելավման առաջարկներով.
- ✓ բաժնի աշխատակիցների պաշտոնների նշանակման, տեղափոխման և զբաղեցրած պաշտոններից ազատման հետ կապված առաջարկություններով,
- ✓ տարբերվող աշխատակիցներին խրախուսելու, իսկ արտադրական և աշխատանքային կարգ ու կանոնը խախտած աշխատակիցներին նյութական և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված առաջարկություններով:

13.1.5. Իր իրավասությունների սահմաններում ստորագրել փաստաթղթեր.

13.1.6. մասնակցել այն հարցերի քննարկմանը, որոնք վերաբերում են իր պաշտոնեական պարտականությունների կատարմանը:

13.2. Հասարակայնության հետ կապերի ղեկավարը պարտավոր է՝

13.2.1. կազմակերպել և անցկացնել մամուլի ասուլիսներ, բրիֆինգներ, «կլոր սեղաններ»՝

¹ Ներկայացնել այն ստորաբաժանումը, որտեղ գտնվում է հասարակայնության հետ կապերի ղեկավարը, օրինակ տնօրինություն, վարչակազմ և այլն:



ղեկավարության մասնակցությամբ, ինչպես նաև տեղեկատվական աջակցություն տրամադրել պաշտոնական պատվիրակություններին:

13.2.2. զանգվածային լրատվության միջոցներին ցուցաբերել, տրամադրել մեթոդական օգնություն՝ Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին հրապարակումներ պատրաստելու հարցերում:

13.2.3. կազմակերպել հարցազրույցներ, ուղիղ եթերներ՝ զանգվածային լրատվության միջոցների համար:

13.2.4. իրականացնել Կազմակերպության գործունեության մասին լրատվության միջոցների կողմից հրապարակված նյութերի օպերատիվ հավաքագրումը, վերլուծությունը:

13.2.5. ժամանակին պատրաստել մամուլ հաղորդագրությունները և այլ տեղեկատվական նյութեր, որոնք վերաբերում են Կազմակերպության և նրա կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ոլորտներին, իրականացնել Կազմակերպությանը հասցեագրված հարցերի հավաքագրում, պատրաստել այդ հարցերի պատասխանների տեղադրումը՝ կայքում տեղադրելու համար:

13.2.6. չհրապարակել ծառայողական գաղտնիքը:

13.2.7. պատշաճ իրականացնել անմիջական ղեկավարի ծառայողական հրահանգները:

13.2.8. պատշաճ իրականացնել իր աշխատանքային գործառույթները և հանձնարարված խնդիրները:

13.2.9. իրավաչափորեն օգտագործել իր ծառայողական լիազորությունները, դրանք չօգտագործել անձնական նպատակներով:

13.2.10. հանձնարարված աշխատանքի վերաբերյալ տալ հավաստի տեղեկատվություն:

13.2.11. կատարել սույն պաշտոնի նկարագրության, աշխատանքի և հրդեհային անվտանգության հրահանգների պահանջները:

13.2.12. կազմակերպության գործունեության և դրա աշխատողների անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային և այլ կանոնների խախտումների դեպքում դրանց վերացման դեմ գործողություններ ձեռնարկել:

13.2.13. ապահովել աշխատանքային կարգ ու կանոնի իրականացումը:

14. Հասարակայնության հետ կապերի ղեկավարը պատասխանատվություն է կրում՝

14.1. սույն հրահանգով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

14.2. իր գործունեության ընթացքում թույլ տված իրավախախտումների համար:

14.3. Կազմակերպությանը նյութական վնաս պատճառելու համար:

14.4. Կազմակերպության ղեկավարության հանձնարարությունները ուշացումով և անորակ կատարելու համար:

14.5. անձնական տվյալների գաղտնիությունը չպահպանելու, կողմնակի անձանց՝ նուտքագրված անձնական տվյալները հայտնի դարձնելու, տրամադրելու համար:

Համաձայնեցված է՝
Անմիջական ղեկավարի հետ՝ _____ /ստորագրությունը / _____ /անվանատառը, ազգանունը/
«__» «_____» 202_թ.

Աշխատանքի նկարագրությանը
ծանոթացա՝ _____ /ստորագրությունը / _____ /անվանատառը, ազգանունը/
«__» «_____» 202_թ.



ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՐԱՅԱՆԳՈՒ

I. Աշխատանքի անվտանգության ընդհանուր պահանջները

1.1. Հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարի պարտականությունների կատարմանը թույլատրվում են 18 տարին լրացած, կրթության և պատրաստվածության անհրաժեշտ նակարդակ ունեցող, բժշկական հակացուցումներ չունեցող, աշխատանքի անվտանգության նախնական և աշխատատեղում առաջնային հրահանգավորում, հրդեհային անվտանգության հրահանգավորում, աշխատանքի անվտանգության պահանջների իմացության ստուգում անցած անձինք:

1.2. Հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը պետք է անցնի՝

- ✓ վեց ամսում առնվազն մեկ անգամ աշխատանքի անվտանգության կրկնվող հրահանգավորում,
- ✓ արտահերթ հրահանգավորում՝ սարքավորումների և գույքի փոխարինման կամ արդիականացման, աշխատանքի պայմանների և կազմակերպման փոփոխության, աշխատանքի անվտանգության հրահանգի խախտման դեպքում:

1.3. Հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը պարտավոր է հետևի.

- ✓ ներքին կարգապահական կանոններին,
- ✓ սույն հրահանգի, այլ լոկալ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին,
- ✓ սարքավորումների շահագործման պահանջներին,
- ✓ անձնական պաշտպանության միջոցների, կահույքի, գույքի ըստ նշանակության օգտագործման նորմատիվներին և հրահանգներին:

1.4. Հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը պարտավոր է՝

- ✓ իմանալ վթարի կամ հրդեհի դեպքում առաջին օգնության ցուցաբերման միջոցների, հրդեհաշիջման առաջնային միջոցների, գլխավոր և պահեստային ելքերի, տարահանման ուղիների տեղակայվածությունը,

- ✓ իմանալ դժբախտ պատահարի դեպքում տուժողներին առաջին օգնության ցուցաբերման կանոնները,

- ✓ իրականացնել միայն հանձնարարված աշխատանքը և առանց ղեկավարի թույլտվության այն չփոխանցել այլոց,

- ✓ աշխատանքի ընթացքում լինել ուշադիր, չչեղվել և չչեղել այլոց, աշխատատեղ չթույլատրել աշխատանքի հետ առնչություն չունեցող անձանց:

1.5. Հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը պետք է հետևի անձնական հիգիենայի կանոններին: Սնունդ ընդունի, հանգստանա միայն դրա համար նախատեսված հատուկ վայրերում.

1.6. հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարի վրա կարող են ազդել հետևյալ վտանգավոր և վնասակար գործոնները՝

- ✓ էլեկտրական հոսանքի հարվածը.
- ✓ բարձրությունից ընկնելը.
- ✓ ջերմային վնասվածքները.
- ✓ նյարդա-հուզական գերլարումները.
- ✓ կրիմինոգեն բնույթի սպառնալիքները.
- ✓ շինության և տարածքների շահագործման հետ կապված վթարային իրավիճակները:

1.7. Աշխատանքի ընթացքում որևէ անսարքության, աշխատատեղում այլ թերությունների կամ վտանգի բացահայտման դեպքում հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը պետք է դադարեցնի աշխատանքը և անմիջապես հայտնի ղեկավարին, գործի նրա ցուցումներին համապատասխան:

1.8. Հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը պետք է իմանա՝

- ✓ հաստատության աշխատանքի կազմակերպման մեթոդները,
- ✓ հաստատության տարածքների պահպանման կարգը,
- ✓ տրամադրվող ծառայությունների ցուցակը,
- ✓ համակարգչից և այլ տեխնիկայի միջոցներից օգտվելու կանոնները,
- ✓ սենյակների, տնտեսական, աշխատանքային և կենցաղային զինվածությունը:

1.9. Հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարին արգելվում է՝

✓ իրականացնել էլեկտրական սարքավորումների, ցանցային հաղորդալարերի, այլ տեխնիկայի և սարքավորումների ինքնակամ շտկում.

✓ աշխատանքի ժամանակ առանց հսկողության թողնել համակարգիչը և մյուս տեխնիկան:

1.10. Հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը գործող օրենսդրությանը համապատասխան պատասխանատվություն է կրում սույն հրահանգի պահանջների չկատարման համար:

II. Աշխատանքի անվտանգության պահանջներն աշխատանքները սկսելուց առաջ

2.1. Ստուգել աշխատատեղի մաքրությունը, համոզվել կողմնակի հոտերի բացակայության (այրուտ, խոնավություն և այլն) հարցում:

2.2. Ստուգել աշխատատեղի մաքրության ընթացքում հայտնաբերված անսարքության մասին գրավոր հաղորդագրությունների առկայությունը/բացակայությունը:

2.3. Աշխատանքը սկսելուց առաջ աշխատատեղում ստուգել՝

- ✓ համակարգչի և տեխնիկայի անսարքությունը.
- ✓ աշխատանքային տարածքի լուսավորվածության բավարար մակարդակը, լույսի կուրացնող ազդեցության բացակայությունը.
- ✓ հոսանքալարերի կախված և մերկ ծայրերի բացակայությունը.
- ✓ բոլոր հոսանքատար և մեկնարկային սարքավորումների հուսալիությունը.
- ✓ աշխատատեղում աթոռի/բազկաթոռի հուսալիությունը.
- ✓ աշխատատեղում կողմնակի առարկաների բացակայությունը:

III. Աշխատանքի անվտանգության պահանջներն աշխատանքի ընթացքում

3.1. Աշխատանքի ընթացքում հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը պարտավոր է՝

- ✓ ապահովել իր և շրջապատի առողջությունը և աշխատանքի անվտանգ պայմանները.
- ✓ ակտիվ մասնակցություն ունենալ աշխատանքի անվտանգության միջոցների իրականացման գործընթացներում.
- ✓ վերահսկել ենթակա աշխատողների կողմից աշխատանքային պարտականությունների պատշաճ իրականացումը.
- ✓ հետևել աշխատողների կողմից հաստատությունում անվտանգության հարցերը կարգավորող լոկալ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարմանը.
- ✓ հետևել առկա սարքավորումների, տեխնիկայի, գույքի սարքինությանը և ճիշտ կիրառմանը:

3.2. Աշխատանքի ընթացքում հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը պետք է լինի ուշադիր, չշտապի և աշխատանքը իրականացնի՝ հաշվի առնելով անվտանգ մեթոդները:

3.3. Էլեկտրական սարքավորումները կիրառելիս անհրաժեշտ է առաջնորդվել սարքավորումների տեխնիկական անձնագրերում ամրագրված կանոններով (հրահանգներով): Հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը չպետք է օգտագործի սարքավորումները՝ առանց դրանց հետ աշխատելու նախնական ուսուցման:

3.4. Հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման ղեկավարը պետք է իր աշխատատեղը մշտապես պահպանի պատշաճ սանիտարական վիճակում:

3.5. Աշխատողը պարտավոր է չթուլատրել միջանցքների, վթարային ելքերի ծանրաբեռնվածություն, թափփվածություն, աշխատատեղում չթուլատրել մուտք գործել կողմնակի անձանց:

3.6. Աշխատանքի ընթացքում առկա թերությունների դեպքում դրանց վերացման դեմ ինքնուրույն գործողություններ ձեռնարկել՝ նման գործողությունների բացահայտ անվտանգության պարագայում, կյանքին և առողջությանը սպառնացող փոքրագույն վտանգի դեպքում տեղեկացնել անմիջական ղեկավարին:

IV. Աշխատանքի անվտանգության պահանջները վթարային իրավիճակներում

4.1. Վթարային իրավիճակում անհրաժեշտ է վտանգի մասին տեղեկացնել շրջապատող մարդկանց և հաստատության ղեկավարությանը:

4.2. Այրվածքի կամ հրդեհի բացահայտման դեպքում՝

✓ ցանցից անմիջապես անջատել էլեկտրական սարքավորումները.

✓ սեղմել հրդեհային ազդանշանային համակարգի կոճակը.

✓ ապահովել աշխատողների տարահանման գործընթացը.

✓ հայտնել հրդեհային անվտանգության աշխատակիցներին և ղեկավարությանը.

✓ հրդեհային անվտանգության հրահանգներին համապատասխան՝ հրդեհաշիջման առաջնային միջոցներով անցնել հրդեհի մարմանը:

4.3. Կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի դեպքում լքել շինությունը:

4.4. Աշխատանքի իրականացմանը խոչընդոտող վթարային իրավիճակներում, վթարային իրավիճակն իր ուժերով վերացնելու անհնարինության դեպքում կանչել համապատասխան վթարային ծառայությանը, տեղեկացնել հաստատության ղեկավարությանը:

4.5. Դժբախտ պատահարի դեպքում տուժողին անմիջապես առաջին օգնություն ցուցաբերել, եթե դա շրջապատողների համար վտանգ չի առաջացնում՝ պատահարի պայմանների պահպանման գործողություններ ձեռնարկել, տեղեկացնել ղեկավարությանը և անհրաժեշտության դեպքում շտապ օգնություն կանչել:

V. Աշխատանքի անվտանգության պահանջներն աշխատանքներն ավարտելուց հետո

5.1. Կարգի բերել աշխատատեղը, էլեկտրական սարքավորումները անջատել ցանցից, անջատել լուսավորությունը, փակել պատուհանները, առկայության դեպքում միացնել ազդանշանային համակարգը:

5.2. Տարածքի մաքրությանը և հետագա շահագործմանը խոչընդոտող անսարքությունների մասին գրավոր հաղորդագրություն թողել:

5.3. Աշխատանքի ընթացքում ի հայտ եկած բոլոր թերությունների և ձեռնարկված միջոցառումների մասին հայտնել անմիջական ղեկավարին:

Հրահանգին ծանոթացա

/ստորագրությունը/

/անունը, ազգանունը, ամսաթիվը/

«2019թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Գործք» ամսագրի կողմից հայտարարված «2019թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» մրցույթի վեցերորդ ընտրական փուլով ավարտվում է «2019թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» մրցույթը:

Ամփոփվել են մրցույթի 6-րդ փուլի և մրցութային տարվա ընթացքում առավելագույն միավորներ ստացած արդյունքները: Նրանք են՝

Սուսաննա Գրիգորյան («ԲԵԼ-ՆԱՐ» ՍՊԸ աշխատակազմի ղեկավար)՝ մրցույթի 6-րդ փուլում ձեռք է բերել 29 միավոր: Տարվա արդյունքներով՝ 155 միավոր:

Տաթևիկ Ջիլավյան (տնտեսագետ, գնումների համակարգող)՝ մրցույթի 6-րդ փուլում ձեռք է բերել 34 միավոր: Տարվա արդյունքներով՝ 140.5 միավոր:

Իրինա Անանյան (Նոյեմբերյանի համայնքային տնտեսությունը սպասարկող հիմնարկ)՝ հաշվապահ-գնումների համակարգող)՝ մրցույթի 6-րդ փուլում ձեռք է բերել 27 միավոր: Տարվա արդյունքներով՝ 137 միավոր: Մյուս մասնակիցները վաստակել են ավելի ցածր միավորներ:

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՌԱՋԻՆԻՑ ՎԵՑԵՐՈՐԴ ՓՈՒԼԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2019Թ.

ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ

ԱՌԱՋԱՏԱՐ ԵՌՅԱԿԸ ԳԼԽԱՎՈՐՈՒՄ ԵՆ



Սուսաննա Գրիգորյան
«ԲԵԼ-ՆԱՐ» ՍՊԸ
Աշխատակազմի ղեկավար



Տաթևիկ Ջիլավյան
տնտեսագետ, գնումների
համակարգող



Իրինա Անանյան
«Նոյեմբերյանի համայնքային
տնտեսությունը սպասարկող
հիմնարկ» հաշվապահ-գնումների
համակարգող

Առաջատար եռյակի անդամների անունը և ազգանունը	I փուլ	II փուլ	III փուլ	IV փուլ	V փուլ	VI փուլ	Տարեկան ամփոփ արդյունքները	
	միավորը տեղը	միավորը տեղը	միավորը տեղը	միավորը տեղը	միավորը տեղը	միավորը տեղը	միավորը	տեղը
Սուսաննա Գրիգորյան	26 / 1	15 / 1	34 / 1	20 / 1	31 / 1	29 / 1	155	1
Տաթևիկ Ջիլավյան	24 / 2	16 / 2	26 / 2	20.5 / 2	20 / 4	34 / 2	140.5	2
Իրինա Անանյան	15 / 6	14 / 5	22 / 6	32 / 4	27 / 2	27 / 3	137	3

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝
«2019թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԵԶՐԱՓՈՎԻՉ ՓՈՒԼԸ ԿԿԱՅԱՆԱ 2020Թ. ՄԱՐՏԻ 13-ԻՆ



**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ... ՄԵԿԼԱՐԿՈՒՄ Է 2020 ԹՎԱԿԱՆԻ
«ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»
ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԸ**

«2020Թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ

I ՓՈՒԼ

«2020թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի 11-րդ շրջանի առաջին փուլին ներկայացվում է հինգ հարցից բաղկացած մեկ հարցաշար, մեկ խնդիր, առաջադրանքներ՝ «Հակասություններ և բացահայտումներ» ու «Գրագիտություն և իրազեկվածություն», ինչպես նաև աշխարհայացքային մտածողությանը վերաբերող թեմաներից:

Հարցաշարի հարցերի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորների թիվը կազմում է 10 միավոր:

Խնդրի ճիշտ պատասխանը կգնահատվի 10 միավոր՝ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Խնդրի առավելագույն միավորը կազմում է 10 միավոր:

Հակասությունների բացահայտման առաջադրանքն ունի մի քանի ճիշտ պատասխան: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան կգնահատվի 1 միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր:

«Գրագիտություն և իրազեկվածություն» մասում անհրաժեշտ է ապառիչ թվարկել օտար պետության բժշկական հաստատությունում բուժում ստացած աշխատողին նպաստ վճարելու ընթացակարգը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան կգնահատվի 1 միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր:

«Աշխարհայացքային մտածողություն» խորագրի ներքո առաջարկվում է ներկայացված ինքնակենսագրության հիման վրա մշակել ժամանակակից CV: Առաջադրանքի յուրաքանչյուր ճիշտ պատասխան կգնահատվի 0.2 միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր:

Առաջին փուլին ներկայացված առաջադրանքների ընդհանուր միավորների առավելագույն թիվը գերազանցում է 35 միավորը:

Առաջին փուլին ներկայացված առաջադրանքներից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Առաջին փուլին ներկայացված առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2020թ. մարտի 29-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2020թ. մարտի 30-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, HR-ի միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2021 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

«2020Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼ ՀԱՐՑԱՇԱՐԸ

1. Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող աշխատողը կարո՞ղ է լինել տվյալ գործատուի մոտ գործող արհմիութենական կազմակերպության անդամ՝

- ա) օտարերկրացին կարող է լինել արհմիության անդամ, որովհետև նա նույնպես ունի աշխատանքային իրավունքի պաշտպանության կարիք.
- բ) օտարերկրացին չի կարող լինել Հայաստանի արհմիութենական կազմակերպության անդամ՝ չունենալով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.
- գ) օտարերկրացին կարող է լինել արհմիության անդամ, եթե արհմիութենական կազմակերպությունը և տվյալ երկրի դեսպանատունը չի առարկում:

2. ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 1-ի թիվ 201-Ն որոշմամբ հաստատված առողջապահական բնագավառի աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանող N1 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ առողջապահական բնագավառի աշխատողների համար աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 39 ժամից: Դա նշանակում է, որ առողջապահական բնագավառի աշխատողների աշխատաժամանակը համարվում է՝

- ա) կրճատ.
- բ) ոչ լրիվ.
- գ) նորմալ:

3. Ծառայությունների մատուցման պայմանագրով կատարված աշխատանքը մասնագիտական աշխատանքային ստաժ համարվու՞մ է, թե՛ ոչ՝

- ա) համարվում է մասնագիտական աշխատանքային ստաժ.
- բ) չի համարվում մասնագիտական աշխատանքային ստաժ.
- գ) միայն կենսաթոշակի անցնելիս կարող է համարվել մասնագիտական աշխատանքային ստաժ, քանի որ ծառայությունների մատուցման պայմանագրով կատարված աշխատանքի ժամանակահատվածը կենսաթոշակի անցնելուց համարվում է աշխատանքային ստաժ:

4. Ինչպես հայտնի է, գործատուն պարտավոր է վարել զինապարտների վերաբերյալ գրանցամատյան: Այս կարգը գործու՞մ է արդյոք համատեղությամբ (միևնույն կամ տարբեր կազմակերպություններում) աշխատողների համար՝

- ա) միևնույն կազմակերպությունում համատեղությամբ աշխատողի մասին գրանցամատյանում գրառում չի կատարվում, իսկ տարբեր կազմակերպություններում համատեղությամբ աշխատողի մասին զինապարտների հաշվառման գրանցամատյանում կատարվում է.
- բ) միևնույն կազմակերպությունում համատեղությամբ աշխատողի մասին զինապարտների հաշվառման գրանցամատյանում գրառում կատարվում է, իսկ տարբեր կազմակերպություններում համատեղությամբ աշխատողի մասին՝ չի կատարվում.
- գ) թե՛ միևնույն կազմակերպությունում և թե՛ տարբեր կազմակերպություններում համատեղությամբ աշխատողի մասին զինապարտների հաշվառման գրանցամատյանում գրառում կատարվում է:

5. Ձեր կազմակերպություն է գործուղվել գործընկեր կազմակերպության ներկայացուցիչը: Ե՞րբ նա կարող է անցնել գործուղման էությունից բխող իր պարտականությունների կատարմանը՝

- ա) երբ ցանկանա.
- բ) երբ գործուղման վկայականը ներկայացնի գործատուին.
- գ) (ա) և (բ) պատասխանները սխալ են:

**«2020Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»
ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ I ՓՈՒԼԻ
ԽՆԴԻՐԸ**

Նորմալ աշխատաժամանակի ռեժիմով (աշխատանքի սկիզբը՝ ժ.9:00, ընդմիջումը՝ ժ.13:00-14:00, աշխատանքի ավարտը՝ ժ.18:00) աշխատողը գործուղվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ Լոս Անջելես քաղաք:

Ինչպես հայտնի է, ԱՄՆ-ի և Հայաստանի ժամային գոտիները տարբեր են. երբ Լոս Անջելեսում առավոտյան ժ.9:00-ն է, Հայաստանում երեկոյան 21:00-ն է, և հակառակը:

Գործուղման ընթացքում աշխատողն աշխատանքի է մեկնել առավոտյան ժ.10:00-ին և վերադարձել աշխատանքից ժ.19:00-ին: Դա նշանակում է, որ Երևանի ժամանակով աշխատանքը սկսվել է ժ.22:00-ին և ավարտվել առավոտյան ժ.7:00-ին:

Գործուղման ժամանակահատվածի համար հաշվարկված աշխատավարձը չի բավարարել աշխատողին: Նա պահանջել է կատարել վերահաշվարկ և իրեն վճարել նաև գիշերային աշխատանքի համար հավելում՝ այն պատճառաբանությամբ, որ Լոս Անջելեսում աշխատանքի 8 ժամը հանդնկել է հայաստանյան ժամանակով գիշեր ժամանակին: Նա իր պահանջը բացատրել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթով, ըստ որի՝ աշխատանքային օրենսդրությունը և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերը տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ծագած աշխատանքային հարաբերությունների վրա, անկախ նրանից, թե որտեղ է կատարվում աշխատանքը՝ Հայաստանի Հանրապետությունում, թե գործատուի հանձնարարությամբ՝ այլ պետությունում:

Գործատուն մերժել է աշխատողի պահանջը և բացատրել, որ աշխատողը սխալ է մեկնաբանել վերոհիշյալ հոդվածի իրավական բովանդակությունը:

Աշխատողը դիմել է դատարան: Դու՞ք եք դատավորը՝ ի՞նչ որոշում կկայացնեք:

**«2020Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»
ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼ
«ՀԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ/ԿԱՍ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ»**

ՀՀ աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների համար հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է՝ բացառությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Բացահայտեք բացառությունները և նշեք այն հոդվածները, որտեղ սահմանվում են հայցային վաղեմության ընդհանուր ժամկետից տարբերվող այլ ժամկետներ:

**«2020Թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»
ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼ
«ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՋԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ»**

Սպառիչ թվարկել օտարերկրյա պետության բժշկական հաստատությունում բուժում ստացած աշխատողին ժամանակավոր անաշխատունակության նպաստ վճարելու ընթացակարգը:



«2020Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ I ՓՈՒԼ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Ձեր առջև անձի կենսագրությունն է: Կազմեք նրա CV-ն:

Անձը ծնվել է 1987թ. հունիսի 1-ին _____ վայրում (նշեք ձեր ցանկությամբ ցանկացած վայր): Հայրը՝ պատվավոր գյուղատնտես է, իսկ մայրը՝ բազմազավակ մայր: Նա ընտանիքի 6-րդ երեխան է: Մանկապարտեզ չի հաճախել: Մանկապարտեզին լիովին փոխարինել են իր եղբայրների ու քույրերի, գյուղի մյուս երեխաների պարտեզային խաղերը: Սովորել է գյուղի 8-ամյա դպրոցում, իսկ հետո ուսումը շարունակել շրջկենտրոնի թիվ 4-րդ միջնակարգ դպրոցում: Գերազանց առաջադիմությամբ դպրոցն ավարտելուց հետո փորձել է ընդունվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, սակայն ձախողել է: Այդ տարին ընդունվել է աշխատանքի՝ շրջկենտրոնում գործող սարքերի գործարանում: Սկզբնական շրջանում աշխատել է որպես բանվոր, ապա՝ ենթավարպետ, 6 ամիս հետո՝ վարպետ:

Աշխատանքի բարձր արտադրողականության, կոլեկտիվում մեծ հեղինակության պատճառով նրան առաջարկում են կազմակերպության գլխավոր ինժեների պաշտոնը, որից նա հրաժարվում է և մեկնում է հայկական բանակ: Ծառայության ընթացքում ծնողները մի քանի անգամ ստանում են շնորհակալագրեր: Ծառայության ընթացքում ստանում է ենթասպայի զինվորական կոչում: Ջորացրվելուց հետո վերադառնում է հարազատ կազմակերպություն: Աշխատանքին զուգահեռ նա երկու տարի շարունակ երեք առարկա ինքնուրույն և մեկ առարկա կրկնուսույցի մոտ պարապելուց հետո կրկին փորձում է ուժերը Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ ընդունվելու համար, որը պսակվում է հաջողությամբ:

Սովորելու ընթացքում նա ուսումնաարտադրական պրակտիկա է անցնում դատախազությունում, ոստիկանությունում, հետո նաև կենտրոնական բանկում:

Համալսարանն ավարտելուց հետո նա աշխատանքի է անցնում «X & Z» կազմակերպությունում, որտեղ աշխատավարձը վճարվում էր ակկորդային եղանակով՝ թիմին՝ լավագույն արդյունքների համար սկզբունքով: Իր կողմից ղեկավարվող թիմը լավ ցուցանիշներ ունենալու պատճառով երկար տարիներ ամենաբարձր աշխատավարձն էր ստանում կազմակերպությունում:

Երկու տարի աշխատելուց հետո նրան առաջարկեցին ղեկավարել «X & Z» արհմիութենական կազմակերպությունը՝ նրան տրամադրելով ծառայողական մեքենա, հեռախոս: Նա հրաժարվում է ծառայողական մեքենայի վարորդից և հեռախոսից: Իշխանական կուսակցությունը, նկատելով անձի պատրաստվածությունը, նրան 2017թ.-ին առաջարկում է ընդունվել կուսակցության շարքերը, որին նա համաձայնում է՝ տանը կնոջ և երկու երեխաների հետ քննարկելուց հետո: Աջ ուժերի կողմից ժնկում կազմակերպված համաժողովի ժամանակ առանց թարգմանչի օգնության ներկայացնում է «Բիզնեսի և արհմիութենական շարժման հիմնախնդիրներն ամբողջ աշխարհում» ծավալուն գիտական աշխատությունը, որի գրավոր տեքստը տպագրվում է Աշխատանքի միջազգային կազմակերպության ամենամյա ամսագրում՝ անգլերեն լեզվով, որի նախաբանում, պատասխանելով լրագրողի այն հարցին, թե ինչով է բացատրում իր հաջողությունները, նա պատասխանել է, որ դրանք պայմանավորված են հայ առաքելական եկեղեցու հետևորդ լինելով, զրուցակցին լսելու կարողությամբ և իր պետությունն անսահման սիրելու զգացումով:

Երեք տարի աշխատելուց հետո թերթում կարդում է հայտարարություն այլ կազմակերպությունում թափուր աշխատելի համար հայտարարված մրցույթի մասին: Նա մրցույթին մասնակցելու համար պետք է կազմի CV:

Օգնեք նրան CV կազմելու հարցում:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ



ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՁԵՐ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, «ԳՈՐԾՔ» ԱՄՍԱԳՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ

(Ընթերցողների հարցերը ներկայացվում են առանց խմբագրման)

ՀԱՐՑ

- Եթե երևան քաղաքում գործունեություն իրականացնող կազմակերպությունում տարվա ընթացքում աշխատողների ընդհանուր թվաքանակը ըստ ամիսների տատանվի, ենթադրենք, հունվար ամսին աշխատողների թիվը կազմի 10-ից պակաս, իսկ փետրվարին՝ 10-ից ավելի, մարտին, կրկին, 10-ից պակաս, ապա աշխատավարձի վճարումը պետք է կատարել կանխիկ, թե անկանխիկ եղանակով:

Պատասխան 1.

- Կանխիկ և անկանխիկ եղանակով աշխատավարձ վճարելու հարցը որոշվում է այն հանգամանքով, թե տվյալ պահին քանի աշխատողի համար է հաշվարկվում և վճարվում աշխատավարձ: Եթե նախորդ ամսվա աշխատավարձը հաշվարկվում է 10 և ավելի աշխատողների համար, ապա վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով, իսկ եթե նախորդ ամսվա աշխատավարձը հաշվարկվում է 10 մարդուց պակաս աշխատողների համար, ապա աշխատավարձի վճարումը կարող է կատարվել թե՛ կանխիկ և թե՛ անկանխիկ եղանակով:

ՀԱՐՑ

- Դպրոցում ունենք 17 դասարան: Քանի՞ դրույք առարկայական խմբակ կարող է պարապել ուսուցիչը տվյալ դպրոցում և ո՞ր կարգով, որոշումով կամ հրամանով:

Պատասխան 2.

- Հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ դպրոց) արտադասարանական խմբակների կազմակերպման որևէ ընթացակարգ սահմանված չէ:

ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը (այսուհետ՝ կանոնադրություն) հաստատելու մասին N1392-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 48-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ դպրոցի տնօրենն իրականացնում է վերահսկողություն դասավանդման

բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, դպրոցի աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ, իսկ նույն կանոնադրության 11-րդ կետի համաձայն՝ դպրոցի տնօրենը ապահովում է արտադասարանական խմբակների և ուսումնական կաբինետների, մասնագիտական կողմնորոշման կենտրոնների բնականոն գործունեությունը:

Կանոնադրության 79-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ դպրոցի մանկավարժական խորհուրդը քննարկում է ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների և ուսումնական կաբինետների ձևավորման, ինպես նաև մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծման հարցերը:

Նկատի առնելով այն հանգամանքը, որ արտադասարանական խմբակների կազմակերպման համար դպրոցի բյուջեում անհրաժեշտ է համապատասխան ֆինանսավորում նախատեսել, ուստի անհրաժեշտ է մշակել բյուջեի նախագիծը, ներկայացնել դպրոցի կառավարման խորհրդի հավանությանը և կանոնադրության 51-րդ կետով սահմանված կարգով իրականացնել բյուջեի հաստատման հետ կապված մյուս գործառնությունները:

3. ՀԱՐՑ

Մեր գործընկեր կազմակերպության ներկայացուցչի հարցը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին (հարցը և պատասխանը ներկայացվում է առանց խմբագրման)

- Խնդրում եմ տալ պաշտոնական պարզաբանում՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 180-րդ հոդվածի 2.1-րդ մասով սահմանված դրույթի և 185-րդ հոդվածի վերաբերյալ՝ մասնավորապես:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 180-րդ հոդվածի 2.1-րդ կետի համաձայն՝ աշխատողի ընթացիկ ամսվա ժամային դրույքաչափը որոշվում է տվյալ ամսվա հիմնական աշխատավարձը կամ պաշտոնային դրույքաչափը ՀՀ օրենսդրությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով կամ աշխատանքային պայմանագրով կամ գործատուի իրավական ակտով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ամսվա աշխատաժամերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով, իսկ աշխատողի ընթացիկ ամսվա օրական դրույքաչափը որոշվում է տվյալ ամսվա հիմնական աշխատավարձը կամ պաշտոնային դրույքաչափը ՀՀ օրենսդրությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով կամ գործատուի իրավական ակտով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ամսվա աշխատանքային օրերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով:

Օրինակ 1.

- Եթե աշխատողի հետ 12.02.2020թ. կնքվել է աշխատանքային պայմանագիր, որում նրա ամսական աշխատավարձը սահմանվել է 120.000 դրամ և աշխատողի համար սահմանվել է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երկու հանգստյան օրով (շաբաթ և կիրակի), ապա տվյալ դեպքում այս աշխատողի փետրվար ամսվա աշխատավարձը ինչպե՞ս է հաշվարկվելու:

Խնդրում եմ նշված օրինակով քայլ առ քայլ ցույց տալ հաշվարկը:

Օրինակ 2.

- Ընկերության երկու աշխատակիցներ, որոնց աշխատանքային պայմանները, աշխատավարձը և շաբաթական հանգստի օրերը լրիվ նույնն են, ենթադրենք, նրանց օրական աշխատավարձը կազմում է 6000 դրամ, մարտ ամսին նրանցից մեկը մարտի 8-ին չի աշխատելու, իսկ մյուս աշխատակիցը աշխատելու է, ապա, խնդրում եմ նշված օրինակում նշել, թե ո՞ր աշխատակիցը ինչքա՞ն աշխատավարձ է ստանալու մարտ ամսվա համար:

Կանխավ շնորհակալություն:

Պատասխան 3.

(Պատասխանում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը)

- Հարգելի գործընկեր,

Ձեր դիմումով նշված հարցերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում չի տրամադրվում, քանի որ ներկայացված մեկնաբանությունները չեն բխում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

Ինչ վերաբերում է դիմումով ներկայացված առաջին օրինակին, ապա տեղեկացնում ենք, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 180-րդ հոդվածի 2.1-ին կետի համաձայն՝ աշխատողի ընթացիկ ամսվա օրական դրույքաչափը որոշվում է տվյալ ամսվա հիմնական աշխատավարձը կամ պաշտոնային դրույքաչափը ՀՀ օրենսդրությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով կամ գործատուի իրավական ակտով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ամսվա աշխատանքային օրերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով:

Հետևաբար, եթե ամսվա աշխատանքային օրերի թիվը սահմանված չէ կոլեկտիվ պայմանագրով կամ գործատուի իրավական ակտով կամ կողմերի համաձայնությամբ, ապա մեկ ամսից պակաս աշխատած աշխատողի համար ամսվա աշխատավարձի հաշվարկման նպատակով հիմնական աշխատավարձը կամ պաշտոնային դրույքաչափը բաժանվում է տվյալ ամսվա աշխատանքային օրերի թվի վրա և բազմապատկվում աշխատողի՝ տվյալ ամսում աշխատած օրերի թվով:

Ինչ վերաբերում է դիմումով ներկայացված երկրորդ օրինակին, ապա նշենք, որ Օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքը, եթե այն նախատեսված չէ աշխատանքի ժամանակացույցով, կողմերի համաձայնությամբ վարձատրվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի առնվազն կրկնակի չափով, կամ աշխատողին մեկ ամսվա ընթացքում տրամադրվում է վճարովի այլ հանգստյան օր, կամ այդ օրն ավելացվում է ամենամյա արձակուրդին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում են, որ ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքի դիմաց վարձատրությունը Ձեր գրությամբ նշված օրինակում կկազմի 12000 ՀՀ դրամ (օրական 6000 ՀՀ դրամ դրույքաչափի կրկնակին), և արդյունքում աշխատողը, բացի տվյալ ամսվա իր աշխատավարձի պաշտոնային դրույքաչափից, կստանա նաև վերը նշված հավելումը, իսկ մյուս աշխատողը, որը ոչ աշխատանքային օրը չի աշխատել, կստանա տվյալ ամսվա հիմնական աշխատավարձը կամ պաշտոնային դրույքաչափը:

ՀԱՐՑ 4.

- **Քարև Ձեզ, խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցին՝ եթե աշխատակիցը տարվա ընթացքում բացակայել է 10 օր /հարգելի բացակայություն/, հիմա պահանջում է չվճարվող արձակուրդ: Այս դեպքում պետք է հատկացնել 50, թե՞ 60 օր չվճարվող արձակուրդ: Այսինքն՝ 10 օրվա բացակայությունը մտնու՞մ է չվճարվող արձակուրդի մեջ, թե՞ ոչ:**

Պատասխան 4.

- Հարգելի բացակայություն կարող են համարվել այն դեպքերը, երբ աշխատողը ոչ իր կամքով կամ օրենքի ուժով չի կարող ներկայանալ աշխատանքի:

Դրանք են՝

1. Ժամանակավոր անաշխատունակությունը.

2. որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելը.

4. փրկարարական աշխատանքներին կամավոր մասնակցելը՝ ոչ ավելի քան 15 օր.

5. պարտադիր բժշկական զննության մասնակցելը.

6. դոնորի պարտականություններ կատարելը.

7. ընտրական իրավունքն իրականացնելը.

8. հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազի և դատարանի կանչով որպես վկա, տուժող, փորձագետ, մասնագետ, թարգմանիչ, ընթերակա ներկայանալը.

9. որպես աշխատողների ներկայացուցիչ՝ դատական նիստերին մասնակցելը.

10. կազմակերպությունում գործող աշխատողների ներկայացուցչական մարմիններում ընտրված աշխատողները տարվա ընթացքում ազատվում են աշխատանքային պարտականությունների կատարումից մինչև վեց աշխատանքային օր ժամկետով՝ աշխատողների ներկայացուցչական մարմինների միջոցառումներին մասնակցելու կամ որպես աշխատողների ներկայացուցչական մարմնի անդամ՝ որակավորումը բարձրացնելու համար,

11. Պարապուրդը:

Աշխատանքի չներկայանալու դեպքում անհարգելի բացակայություն է համարվում աշխատանքի ինքնակամ չներկայանալը:

Ինչպես նկատում եք, եթե աշխատողը 10 օր աշխատանքի չի ներկայացել և այն որակվել է որպես հարգելի, ապա նշանակում է, որ առկա է սույն գրության առաջին 1-10 դեպքերից որևէ մեկը, ինչը, բնականաբար, որևէ կապ չունի չվճարվող արձակուրդի հետ:

Ավելին՝ «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն (հարկային գործակալը) գրանցման հայտ է ներկայացնում՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու, այդ արձակուրդը ավարտվելու դեպքում:

Քանի որ Դուք համապատասխան հայտ չեք ներկայացրել հարկային մարմիններին, հետևաբար հարկային օրենսդրության տեսանկյունից տվյալ աշխատողը ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով չի գտնվել չվճարվող արձակուրդում:

Հետևաբար, եթե կողմերը եկել են համաձայնության չվճարվող արձակուրդ տրամադրելու հարցում, ապա նրա տևողությունը կարող է կազմել մինչև 60 օր:



**ՁԵՐ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ «ԳՈՐԾՔ»-Ի
«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ»
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ**

**5.
ՀԱՐՑ**

- Մեքենա են վարձակալել ֆիզիկական անձից, զնել են դողեր: Ինչպե՞ս կապիտալացնել կամ ծախսագրել. հնարավոր է վարձակալությունը դադարեցվի ավելի շուտ, քան դողի մաշվելը: Ինչպե՞ս վարվել:

Պատասխան 5.

- Ձեր կողմից նշված հարցը կարգավորվում է ՀՀ հարկային օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, ըստ որի՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվի (այդ թվում՝ գործառնական վարձակալությամբ կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված) վրա կատարված ընթացիկ բնույթի ծախսերը՝ դրանց կատարման տարվա ընթացքում: Սույն կետի կիրառության իմաստով՝ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի վրա կատարված ծախսը համարվում է ընթացիկ բնույթի ծախս, եթե սույն մասի 1-ին կետի համաձայն՝ այն չի համարվում կապիտալ բնույթի ծախս:

Սույն մասի կիրառության իմաստով՝

1) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվի վրա կատարված ծախսերը՝ որպես կապիտալ կամ ընթացիկ բնույթի ծախսեր, դասակարգելու համար գործառնական վարձակալությամբ կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքներ են ընդունվում վարձատուի կամ լիզինգատուի կամ անհատույց օգտագործման տրամադրողի մոտ հաշվառված՝ համապատասխանաբար սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքները, որոնք նշվում են համապատասխան ակտում կամ պայմանագրում կամ հանձնման-ընդունման փաստաթղթում: Դրանցում սկզբնական և (կամ) հաշվեկշռային արժեքների բացակայության դեպքում այդ արժեքները համարվում են զրո:

2) գործառնական վարձակալությամբ կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացնելու համար որպես ամորտիզացիոն նվազագույն ժամկետ է ընդունվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետը, իսկ որպես մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատված է ընդունվում վարձատուի կամ լիզինգատուի կամ անհատույց օգտագործման տրամադրողի մոտ հաշվառված մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածը, որոնք նշվում են համապատասխան ակտում կամ պայմանագրում կամ հանձնման-ընդունման փաստաթղթում: Դրանցում մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածի բացակայության դեպքում որպես մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատված է ընդունվում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետը:

3) գործառնական վարձակալությամբ կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են այն դեպքում, երբ այդ ծախսերի

կատարման պարտականությունը համապատասխան ակտով կամ պայմանագրով կրում է վարձակալը կամ օգտագործողը.

4) գործառնական վարձակալության կամ ֆինանսական վարձակալության (լիզինգի) կամ անհատույց օգտագործման պայմանագրի լուծման և (կամ) փաստացի դադարեցման դեպքում կապիտալ բնույթի ծախսերի չամորտիզացված մնացորդը վարձակալի կամ օգտագործողի համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ վարձակալը կամ օգտագործողը կապիտալ բնույթի ծախսերի չամորտիզացված մնացորդը հատուցման դիմաց օտարում է վարձատուին կամ հիմնական միջոցը և ոչ նյութական ակտիվը օգտագործման տրամադրողին.

5) ամորտիզացիայի ոչ ենթակա հիմնական միջոցների (այդ թվում՝ հողամասերի) վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերն ամորտիզացվում են սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով այլ հիմնական միջոցների համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետում՝ հաշվի առնելով սույն պարբերության 1-4-րդ կետերով սահմանված դրույթները:

6.

- Եթե կազմակերպությունը ԱԱՀ վճարող համարվելու և շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ օրենսգրքով սահմանված կարգով դիմում չի ներկայացրել, ապա հարկային հաշիվներով ստացված ԱԱՀ-ի դեբետային գումարների հաշվանցման իրավունք ունենում է, թե՛ ոչ:

Պատասխան 6.

- ՀՀ հարկային օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված դեպքերում Օրենսգրքի 292-րդ հոդվածին համապատասխան՝ որպես ԱԱՀ վճարող, հաշվառումն իրականացնում է հարկային մարմինը՝ սույն մասում նշված կետերով սահմանված օրը:

Այսինքն, եթե կազմակերպությունն ինքնուրույն չի ներկայացնում ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ միասնական հայտարարություն, ապա 293-րդ հոդվածով սահմանված կարգով՝ գործող կազմակերպության դեպքում փետրվարի 21-ից, իսկ հաշվետու տարում գրանցված կազմակերպության դեպքում գրանցման օրվանը հաջորդող 21-րդ օրվանից՝ որպես ԱԱՀ վճարող, հաշվառումն իրականացնում է հարկային մարմինը:

Հաշվի առնելով վերոգրյալը, պետք է նշել հետևյալը՝ քանի որ կազմակերպությունը հաշվառված է որպես ԱԱՀ վճարող, ապա հարկային հաշիվներով ստացված ԱԱՀ-ի դեբետային գումարների հաշվանցման իրավունք ունի:

7.

- Լիզինգով մեքենա է ձեռք բերվել: Հիմնական միջոցի մաշվածք հաշվարկելու համար ո՞ր գումարը համարել սկզբնական արժեք:

Պատասխան 7.

- ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն՝ ակտիվի սկզբնական արժեքը ակտիվի ձեռքբերման գնի (անհատույց ստացման դեպքում՝ ստացվող ակտիվի գնի, իսկ կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ներդրման դեպքում՝ կողմերի պայմանավորվածությամբ որոշված գնի, որը ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով), կառուցման կամ ստեղծման կամ մշակման ծախսերի (այդ թվում՝ չփոխհատուցվող և Օրենսգրքով սահմանված կարգով չհաշվանցվող (չնվազեցվող) հարկերի և վճարների), տեղափոխման,

տեղակայման ծախսերի և (կամ) ձեռքբերման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի հանրագումար՝ դրամական արտահայտությամբ:

Հետևաբար, անկախ այն հանգամանքից, որ ակտիվը ձեռք է բերվել լիզինգով, ակտիվի սկզբնական արժեքը է որոշվում է վերոնշյալ ծախսերի հանրագումարով:

ՉԱՐՑ 8.

- Եթե կազմակերպությունը ձեռքբերված հիմնական միջոցները դեռևս չի շահագործում, արդյոք իրավունք ունի՞ տվյալ հիմնական միջոցների համար հաշվարկի մաշվածություն, թե՛ ոչ:

Պատասխան 8.

- ՀՀ հարկային օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են ամորտիզացիայի ենթակա, սեփականության իրավունքով ռեզիդենտ շահութահարկ վճարողին կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին պատկանող կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) ստացված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը:

Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածում նկարագրված չէ «ամորտիզացիայի ենթակա» եզրույթը:

ՀՀ հարկային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող իրավական ակտերում կիրառվող հասկացությունները Օրենսգրքում կիրառվում են այդ իրավական ակտերում կիրառվող իմաստով ու նշանակությամբ, եթե Օրենսգրքով այլ բան սահմանված չէ:

ՀՀ ՄՍ 16-ի 55-րդ կետի համաձայն՝ ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու), և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Հետևաբար, մաշվածության հաշվարկը չի դադարում այն դեպքում, երբ ակտիվը գտնվում է պարապուրդի մեջ կամ հանվում է ակտիվ օգտագործումից, բացառությամբ եթե ակտիվը ամբողջությամբ մաշեցվել է:

Այնուամենայնիվ, ակտիվի օգտագործման վրա հիմնված մեթոդների համաձայն (օրինակ՝ ըստ արտադրված միավորների քանակի)՝ մաշվածության գումարը կարող է լինել զրո, քանի դեռ չկա արտադրություն:

ՀՀ հարկային օրենսգրքի 121-րդ հոդվածի և ՀՀ ՄՍ 16-ի 55-րդ կետի համադրությունից ակնհայտ է դառնում, որ մաշվածքի հաշվարկման համար էական հանգամանք է հանդիսանում ոչ թե տվյալ պահին շահագործման մեջ գտնվելը, այլ այն թե արդյոք այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար:

Եթե ՀՀ ՄՍ 16-ով սահմանված պայմանը բավարարված է, ապա կարող եք մաշվածություն հաշվարկել:



Ռադիոկայանների մայրաքաղաք

YEREVAN FM 101.9

Հեռ.՝ (374 10) 55 10 12
www.yerevanfm.am

